

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերջագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՔԱՂԴԱՍԱԳԻՐՔ

ԳԼՈՒԽ I

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ПОСТОЯВЛЕНИЯ
Людского Мира
СССР

355.23

4-33

ՅԵՐԵՎԱՆ

1932

1 MAR 2011 2/2

355.23

4-33

ԽՀՍՄ ԹՐՈՒՆԵՏԱՐՆԵՐ ԲՈՒՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵ՛Ք ՀՍԽՀ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՔԱՂԴԱՍԱԳԻՐՔ

(ԸՆԴՀԱՆՈՒՐ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԻՆ)

ԳԼՈՒԽ I

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Лиадский Науч
СССР

Գեորգի Կոչարյան
Գլավ. 6902 (բ)
Պատվեր 6618
Տիրաժ 3000



58369-67

ԳԼՈՒԽ I

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԻՍՏԵՄՆԵՐ

Կարմիր բանակը պաշտպանում է ԽՍՀՄ, — միջազգային պրո-
լետարիատի սոցիալիստական հաշտների: Կարմիր բանակը բո-
լոր յերկրների բանվորների ու գյուղացիների բանակն է, համազ-
խարհային պրոլետարական հեղափոխության բանակը: Ամեն մի
կարմիր բանակային պետք է շարունակ լավ գիտենա Խորհրդային
Միության միջազգային դրուժյունը, վերաբերվի տեղին, թե՛
վերաբերվի և կապիտալիստների հարձակման վտանգ սպառնում
ԽՍՀ Միությանը: Իրա հետ միասին յուրաքանչյուր կարմիր
բանակային պետք է գիտենա, վեր պայքարն աճող սոցիալիզմի
ու մեղմող կապիտալիզմի միջև հանդիսանում է ներկայումս
միջազգային բոլոր անցքերի հիմնական առանցքը: Կոմունիստա-
կան Խոտերնայինալի դեկալարությանը արագ տեմպերով ծավալ-
վում են դատակարգային մարտերը: Միջազգային բանվոր դա-
տակարգը գաշնակցած աշխատավոր գյուղացիության և զազուր-
ների ճնշված ժողովուրդների հետ միասնական ճակատով հանդես
են գալիս կապիտալիզմի դեմ:

ՅԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀ, ՅԵՐԿՈՒ ԱՐԳՅՈՒՆԷ

ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Յերկու հախտակ աշխարհ կանդնած են միմյանց դեմ: Սո-
ցիալիզմի աշխարհը, բանվորական իշխանության և աշխատան-
քի աշխարհը մեր Խորհրդային Միության մեջ: Կապիտալիստա-
ների, շահագործման, գործադրիության ու սովի աշխարհը մնա-
ցած յերկրներում:

Ընկ. Ստալինը կուսակցական լեզու համազուգում այգ
յերկու աշխարհի ժամանակակից դրուժյան մասին տվեց այսպիսի
գնահատական:

«Մեզ մոտ, Խորհրդային Միության մեջ սոցիալիստական
չինարարության թե՛ արդյունաբերության և թե՛ գյուղատնտե-
սության աճող վերելք է, նրանց մոտ, կապիտալիստների մոտ,
եկոնոմիկայի թե՛ արդյունաբերության և թե՛ գյուղատնտեսու-

Թխան աճող ճգնաժամ... Այնտեղ, կապիտալիստների մոտ բան-
վորները գործադուլներ ու ցույցեր են անում, կազմակերպելով
հեղափոխական պայքար գոյություն ունեցող կապիտալիստական
իշխանության դեմ, միջոցառման մեղ մոտ ԽՍՀՄ մեջ, մենք ունենք
միլիոնավոր բանվորների ու գյուղացիների աշխատանքային մեծ
մրցակցության պատկեր, խորհրդային իշխանությունն իրենց
կրճատվ պաշտպանելու պատրաստակամությունը»:

**ՄԵՐ ԱՐԳՅՈՒՆՔՆ Ե՝ ՍՈՑԻԱԼԻՉՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԵԾԱԳՈՒՅՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Չկա այլևս միասնական կապիտալիստական համաշխարհային
անտեսություն, քանի վոր գոյություն ունի ԽՍՀՄ, վորտեղ տրն-
տեսությունը կառուցվում է ու զարգանում սոցիալիստական հի-
մունքներով:

Մենք մեծազույն հաղթանակներ ենք տանում այն ժամանակ,
յերբ կապիտալիզմը դալարվում է ամենասուր ճգնաժամի ճիրան-
ներում, ճգնաժամ, վորի նմանը չի յեղել յերբեք:

ԽՍՀ Միություն մեջ տեղի յե ունենում անտեսության չտեսնը-
ված վերելք նոր, սոցիալիստական հիմունքներով: Մեղ մոտ ա-
ճում է աշխատավորների կյանքի կուլտուրական ու նյութական
մակարդակը:

Մենք թևակոխել ենք սոցիալիզմի շրջանը: Դեռ յերբեք այն-
չափ մեծ, այնչափ շոշափելի չեն յեղել բանվոր դասակարգի
հաջողությունները, վորչափ այժմ: Այդ հաջողությունները հա-
մոզում են բոլոր յերկրները աշխատավորներին, վոր անխուսա-
փելի յե սոցիալիզմի հաղթանակը կապիտալիզմի դեմ: Մեր վոր-
ձով նրանք սովորում են, թե ինչպես պետք է պայքարել կապի-
տալիստների դեմ:

Սոցիալիզմի շրջանը թևակոխած խորհրդային յերկրի աշ-
խատավորները իրենց կուսակցության ղեկավարությունը ավար-
տում են սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը:
Մեղ մոտ ավելի ու ավելի յե զարգանում է ընդարձակվում կո-
մունիստական վերաբերմունքը դեպի աշխատանքը միլիոնավոր
բանվորների ու կոլտոզնիկների կողմից, վորոնք գիտակցում են,
վոր սոցիալիստական շինարարությունն — այդ իրենց դասակար-
դային, հարազատ գործն է: Սոցիալիստական մրցակցությունն
ու հարվածախուլությունը վիթխարի քայլերով առաջ են շարժում
մեր յերկրի զարգացումը: Շատ խոշոր ձեռնարկություններ է
ժողովրդական անտեսության առանձին ճյուղեր արդեն կատարել
են հինգամյակը 2½ և 3 տարում: Բանվոր դասակարգը կոլտոզային
գյուղացիության հետ միասին կոմունիստական կուսակցության
ղեկավարությամբ կատարել է հնգամյակը չորս տարում:

Մեր գյուղատնտեսությունը զարգանում է սոցիալիստական
ուղիով: Կոլեկտիվացումն ավարտված է գյուղատնտեսական հիմ-
նական ուսյոններում, գյուղատնտեսության սոցիալիստական սեկ-

տորի բացարձակ ղերակշռություն է ձեռք բերված միանձնյա
գյուղացիական անտեսությունների նկատմամբ: Կոլտոզային
գյուղացիությունն արդեն զարձեղ է հողագործության կենտրոնա-
կան դեմքը, Խորհրդային իշխանության գլխավոր և ամուր հե-
նարանը գյուղում: Չքավորի ու միջակ մենատնտեսատերի դերը
գյուղատնտեսական արտադրության մեջ դարձել է յերկրորդա-
կան: Ավարտվել է համատարած կոլեկտիվացման հիման վրա հիմ-
նականում կուլակուրքյան վորպես դասակարգի վերացումը ԽՍՀՄ
հացահատիկային ու հումուրքային գլխավոր ուսյոններում: Մեր
յերկիրն արդեն դարձել է աշխարհում ամենախսյոյս գյուղատնտե-
սարքյան յերկիր:

Սոցիալիստական ու կապիտալիստական տարրերի դեմ մղած
պայքարում մեր յերկրում սոցիալիզմը տարալ վճուական հաղ-
թանակը, — կապիտալիստական տարրերը պարտված են վոչ միայն
արդյունաբերության, այլև գյուղատնտեսության մեջ: Սոցիա-
լիստական շինարարության մեջ ձեռք բերած մեր հաջողություն-
ներն ու նվաճումները առաջացնում են մեր բարեկամների հիաց-
մունքը և շահագործողների վախն ու տեսելությունը:

Վորպիտին է սոցիալիզմի շինարարության արդյունքը ԽՍՀՄ-
ում:

**ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄՆ ՈՒ՝
ՀԵՂԱՓՈՒՄԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄՈՒ ԱՃՈՒՄԸ**

Նույն այդ ժամանակ կապիտալիստական յերկրներում ծու-
վալվում է իր չափերով չտեսնված անտեսական ճգնաժամը: Այդ
ճգնաժամը բուն է տնտեսության բոլոր ճյուղերը: Եվագում են
տրանսպորտի վոլտագրությունները: Դրամն օրեցօր անպետք է
դառնում: Վատթարանում է աշխատավորների դրությունը: Աճող
թանգությունից կյանքն անտանելի յե դառնում է այն աշխատա-
վորների համար, վորոնք ունեն վորոշ խնայողություններ: Գոր-
ծադրության մասսայական աճումն ու բանվոր դասակարգի
չքավորացումը լրացվում են գյուղացիության քայքայումով:

Գերմանիայում բանվոր դասակարգը ուժեղ կոմկուսակցու-
թյան ղեկավարությամբ պայքարում է սոցիալ-ֆաշիզմի ջախ-
ջախման համար: Լեհաստանում հեղափոխական շարժման վերելքն
արտահայտվում է խոշորագույն գործադուլներով (որինակ՝ Վար-
շավայի ելեկտրոշարժի աշխատողների գործադուլը) և ընդհա-
տակյա կոմկուսակցության ղեկավար դերի աճումով, գյուղա-
ցիական մասսաների հեղափոխական վերելքով թե Արևմտյան Ուկ-
րալայնայում, թե՛ Բելոռուսիայում ու բուն Լեհաստանում: Այլ յեր-
կրներում նույնպես աճում է պրոլետարիատի մարտական տրամա-
դրությունը: Բավալիան է հիշել Փրանսական մանածագործների գոր-
ծադուլը Ռուբեյում, վորն ուղեկցվեց բարիկադային մարտերով,
բանվորների մասսայական ցույցերն Անդլիայում, վոր անցնում

եյին կոմիտեային ղեկավարութեամբ ու լոյսնաբերով, հուշումներն անգլիական նախատորմում, — անգլիական իմպերիալիզմի այդ ամբողջում, — Պենսիլվանի լեռնային արդյունաբերութեան բանվորները դործադուլը Հյուսիսային Ամերիկայում, վերջին թիվը անդի սննցան արյունալի ընդհարումներ վստահանութեան հետ:

Ծավալում է հեղափոխական շարժման թափը գաղութային ու կախալ յերկրներում: Չինաստանից, վերսեղ յերեքհարյուրհարանոց կարմիր բանակն իշխում է 60 միլիոն բնակչութեան ունեցող ստրուկներում, վերսեղ Սուրբդային իշխանութեան է կազմակերպված, հեղափոխական շարժումը տեղափոխվել է Ֆրանսական իմպերիալիզմի գաղութ՝ Հնդկաստան: Այստեղ կոմունիստները ղեկավարութեամբ տեղի յեն ունենում գյուղացիական խոշորագույն ապստամբութեաններ, վերսեղ առաձին ստրուկներում վերջանում են իշխանութեան զբաղումով ու խորհուրդները կազմակերպումով:

Հեղափոխական վերելքը դառնում է ընդհանուր, թեև նա զարգանում է վոչ համաշափ: Բուրժուազիան խուճապի յե մատնված: Նա տենդորեն յեր է փնտում իր տնտեսութեան ամենափոսնագավոր տեսական ճշմարտից: ԽՍՀՄ սոցիալիզմի հաջողութեանները ավելի ու ավելի ծանր հարվածներ են հասցնում բուրժուազիային:

Իսպանիայում մասսաներին ցույց է տալիս ճշմարտից միակ ճիշտ յերը, այն է՝ բուրժուազիայի դիկտատուրայի տապալումը պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը:

Ինչպիսի՞ն է կապիտալիստների տնորինութեան արդյունքն ամբողջ աշխարհում:

ԻՆՉՈՒ ՅԵՔ ՄԵՆԻ ԱՃՈՒՄ, ԻՍԿ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԸ ԳՆՊԻ ԱՆԿՈՒՄ ԳՆՈՒՄ

Ի՞նչն է մեր հաջողութեանները պատճառն այն ժամանակ, յերթ թշնամիները յերկրներում տնտեսութեան ավելի ու ավելի յե քայքայում: Չն վոր կապիտալիստների կապիտալները մերից շատ են, մենք աղքատ ենք այդ տեսակից: Նրանք մեզանից ավելի շատ տեխնիկապես — փորձված կազմեր ունեն, ավելի մեծ փորձառութեան ունեն տնտեսութեան վարելու մեջ: վերջապես՝ մասսաների ընդանուր կուլտուրական մակարդակն էլ կապիտալիստական յերկրներում նույնպես յարձր է, ըսն թե մեզնում, — թվում էր թե այս բոլորը պետք է մեծ նշանակութեան ունենային ժողովրդական տնտեսութեան զարգացման համար:

Յե՛վ այնուամենայնիվ «Ռուսաստանը յիտում է, իսկ Յեկրայան սանչում», — ինչպես գրում է բուրժուական մի տնտեսագետ: Յե՛վ այնուամենայնիվ «ԽՍՀՄ... դանվում է տնտեսական աճող վերելքի գրութեան մեջ և վճռական հաջողութեաններ ունի տնտեսական

շինարարութեան ճակատում, իսկ առաջալոր կապիտալիստական յերկրները... դանվում են տնտեսական աճող ճշմարտի գրութեան մեջ և պարտութեան պարտութեան յեսնից են կրում տնտեսական զարգացման բնազավառում» (Ի. Ստալին):

Ի՞նչն է դրա պատճառը: Այսպիսի հարց են տալիս յերենց կապիտալիստները նույնպես, տեսնելով ԽՍՀՄ սոցիալիստական շինարարութեան ակնհայտ հաջողութեանները:

«Մի՞թե՞ կապիտալիստական տնտեսական սխտեմն է հանցավոր այս բոլոր աղետների համար, — դնում է կապիտալիզմի համար սոսկալի այս հարցը ամսաբերական բուրժուական մի թերթ, ամփոփելով սրվող ճշմարտի, աճող դործադրկութեան, ուժեղացող հեղափոխական շարժման տարվա արդյունքները:

Բուրժուական թերթն այս անգամ միանգամայն իրավացի յե: Հատկապես հենց տնտեսութեանները տնտեսական սխտեմների տարբերութեան մեջ պետք է փնտնել մեր հաջողութեանները ու նրանց անկման պատճառը: Այդ պատճառը «կապիտալիստական սխտեմի անճարակութեան և տնտեսութեան խորհրդային սխտեմի ստավելութեանների մեջ է հանդես կապիտալիստականի» (Ի. Ստալին):

— Ահա թե ինչու, — այսպես է ասում ընկ. Մուրտովը, — սոցիալիզմի ու կապիտալիզմի ուժերի հարաբերակցութեան զարգացումը վիայում է «մեր ոգտին, սոցիալիզմի դործի ոգտին, մեր թշնամիների դեմ, կապիտալիզմի դեմ»: Իսկ այդ նշանակում է, վոր համաշխարհային զարգացման դիժն ընթանում է սոցիալիզմի միջազգային գործի հաղթանակի ոգտին, ընդդեմ իմպերիալիզմի»:

Ներքևում մենք մտերամտանորեն կքննենք կապիտալիստական հասարակակարգի առանձնահատկութեանները, դրութեանը կապիտալիստական յերկրներում և կհամեմատենք այն մեր սոցիալիստական հասարակակարգի հետ և մեզ մոտ, ԽՍՀՄ, տիրող գրութեան հետ:

վո՞րն է մեր հաջողութեանների գլխավոր պատճառը: Վո՞րն է կապիտալիզմի անկման գլխավոր պատճառը:

ՀԱՄԱՆԵՍԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻՉՄԻ ՅԵՐԿՐՈՒՄ

Յերկու տարուց ավելի յե, ինչ կապիտալիստական աշխարհում տիրում է ամենատուր տնտեսական ճշմարտ: ճշմարտում ընկած են բոլոր յերկրները, ընդառութեամբ սոցիալիստական հաղթանակ շինարարութեան յերկրի՝ ԽՍՀՄ: Կապիտալիզմի պատմութեան մեջ այդ առաջին ճշմարտը յե, բայց յերբեք դրա նմանը յի յեղել յի խորութեամբ, ուժով ու տեղութեամբ:

1929 թվից խոշոր կապիտալիստական բուրձր յերկրներում արտադրութունն անընդհատ կրճատվում է: Գերմանիայում 1931 թ. արտադրութունն ընկել է 28,7 տոկոսով, ՀՄՄՆ-ում՝ 35 %, Անգլիայում՝ 30,1 տոկոս: Հանդուհում են գոմնաների ու մարտենների վառարանները, փակվում են հանքերն ու հանքահորերը, անչարժ կանգնած են մեքենաշինարարական ու տեքստիլ գործարանները: 37 միլիոն բանվոր փողոց են նետված առանց աշխատանք ստանալու վորեն հույսի: Այն ձեռնարկութունները, վորոնք դեռ չեն փակվել, աշխատում են խիստ սրահաս րեռնավորումով, հաճախ վոչ լրիվ շարժվում: Խնամութենքը լիքն է յին սպրանքով, իսկ այդ սպրանքի համար գործողներ չկան: Ավելի շատ սպրանք է արտադրված, քան կարող են դնել քայքայված ու աղքատացած բանվորներն ու գյուղացիները:

Կապիտալիստները կանգ չեն առնում սպրանքների պաշարների վոչնչացման առաջ, վորպեսզի դրանով առաջացնեն դնեւրի բարձրացում և աղքատվեն քայքայումից: Ամերիկայում կապիտալիստները հրամայում են շոգեշարժերի փտարաններում վառել ցորեն, դիմված ուժի ոգնությամբ արգելում են նավթ արտահանել և փակում են նավթի վելկաները: Անգլիայում շարժելու յին հանձնում վիթխարի քանակով մանածագործ հաստոցներ: Ավերվում են ամբողջ ձեռնարկութուններ: Յեւ վիենույն ժամանակ աշխատավոր մասսաները մեռնում են սովից, գործազրկութունն ընդգրկում է նորանոր միլիոնավոր պոռլեաարների:

Ամերիկայի շատ քաղաքներում գործազուրկները լուսաբացից շատ առաջ դալիս կանգնում են գործարանների դարբանների մոտ, աշխատանք վորոնելու: Նրանք ցնցոտիներով փաթաթվում են իրենց վոտերը, վորպեսզի ցրտահար չլինեն: Նյու-Մորկում գործազուրկները ձմեռն սպրում են շտաբայրած ու չլուսավորված դնակարաններում, բնակարանավարձ չվճարելու համար նրանց փողոց են նետում:

Գերմանիայում ու Լեհաստանում վոչ միայն գործազուրկները, այլև նրանց ընտանիքի անդամները նույնպես, վաճառելով ամեն ինչ և հույս չունենալով գործի մտնելու, ինքնասպանությամբ վերջ են ապրիս իրենց կյանքին: 1930 թվին Յեւրոպայում արձանագրված է ինքնասպանության 50 հազար դեպք:

Գերմանիայում, Անգլիայում և Յեւրոպայի այլ յերկրներում շրջադալության յեղած մեր հարվածալինները հաղորդում են, վոր հայրերի ու դավալների աջքի առաջ կանայք ու մայրերը վաճառվում են ստալին պատահած անցորդին, վորպեսզի ստացած գրոշներով ընտանիքի համար հաց ու կարտոֆիլ գնեն:

Արդյունաբերական ճգնաժամը ներհյուսվում է գյուղատնտեսական ճգնաժամի հետ: Այդ ել ալելի յե սրում արդյունաբերական ճգնաժամը, կրճատելով գյուղացիության գնողունակութունը:

Ամերիկայի պրեզիդենտ Գուվերը կառավարության անունից

հանձնարարում է Ֆերմերներին ցանքերը կրճատել 20 տոկոսով (ցանքերի կամպանիա հակառակ կողմից): Ֆերմերները վորպես փրկություն հույսը դրել են անբերրիության, յերաչափ ու մորեխի վրա: Բրազիլիայի պլանտատոները 1930 թվին ծով են նետել 2 միլիոն տոպրակ սուրճ: Ֆերմերները դաշտում առանց հավաքելու յին թողնում կարտոֆիլի, թեյի և այլ մշակութիների վիթխարի տարածութուններ, վորովհետեւ այդ մթերքների համար գնորդներ չկան:

Գյուղատնտեսական մթերքների անասելի ցածր գները անչափ բարձր հարկերի ու սուրքերի հետ միասին և հողի բարձր կապալավարձի հետ քայքայում են տասնյակ միլիոնավոր գյուղացիական տնտեսութուններ: Այսպես, որինակ՝ Ամերիկայում 1930 թվին քայքայվել ու քաղաք են տեղափոխվել 4 միլիոնից ավելի ֆերմեր: Գյուղատնտեսութունից գործած այդ փախուստը դեպի քաղաք շարունակվում է և այժմ, թեև քաղաքներում քայքայված գյուղացիներին սպասում է անհույս գործազրկություն:

Ամերիկայի մե շարք վայրերում անբերրիութունն առաջացրել է սոսկալի սով Ֆերմերների մեջ և վոչ միայն չի մեղմել ճգնաժամը, այլ ընդհակառակն, ուժեղացրել է այն: Լեհաստանի հոգաբարձության միլիտարը նորբոս հայտարարել է, վոր յերկրի գյուղատնտեսութունն իրենից ներկայացնում է «դերեզմանատուն»: Գյուղացիների դրությունը Չեխոսլավակիայում, Ռուսիայում, Հունգարիայում շատ քչով է տարբերվում վերևում նկարագրածից:

Ինչպե՞ս է ճգնաժամն անդադարանում կապիտալիստական յերկրների տնտեսության վրա:

Ինչպե՞ս է ճգնաժամն աղբել բանվոր դասակարգի ու գյուղացիության դրության վրա:

ՓԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՄ

Ավելի վաթար է, քան կապիտալիստական յերկրներում գաղութային ու կախյալ յերկրների բանվորների ու գյուղացիների գրությունը: Գաղութներում կապիտալիստները կնքում են բանվորներ վարձելու պայմանագրեր յերկար ժամկետներով (չինացիներ, մալայացիներ և այլն): Այդ բանվորներին նրանք փակում են հատուկ «բարակների» մեջ, և յերբ բանվորները փախչելու փորձ են անում, նրանց ձեռնում են մարակներով: Միքանի գաղութներում ցեղապետները մարդկանց վաճառում են ստրկության: Յերկու հարյուր հազար այդպիսի ստրուկ աշխատում են ամերիկացիների կառուցկային պլանտացիաներում Լիբերիայում (պետութուն է Աֆրիկայում): Չինաստանում ստրուկների գնումն ու վաճառումը կաղմում է կովոզ դեներայների յեկամտի աղբյուրներից մեկը:

Հնդկաստանի արդյունաբերական կենտրոնների բանվորների յերկու յերրորդը վաչխատուների պարտապաններն են: Վաչխատուների իրենց պարտքերը դանձում են նրանց աշխատավարձից վիճիխարի տոկոսներով: Աշխատանք ստանալու համար բանվորներն ստիպված են լինում կաշառքներ տալու: Միջանի գործարաններում բանվորներն ստանում են դրամ, գրավ դնելով իրենց յերկխաններին: Հնդկաստանը ստրկութան, հարկադրական աշխատանքի, հիվանդությունների ու չքավորութան յերկիրն է:

Ավելի բարելավ դրութան մեջ չեն դադութային այլ յերկրրների բանվորները: Գյուղատնտեսութան ճգնաժամն առանձնուպես մեծ է Ձրնաստանում, Հնդկաստանում և գաղութային ու կայսրայ այլ յերկրներում, փորնց քայքայում են համընդամեն իմպերիալիստները: Այդ յերկրներում միլիոնավոր գյուղացիներ կոտորվում են սովից:

Սովյալների ողնության Միջազգային հանձնաժողովի տեղեկություններով հենց միայն չինական Գուանսի դալառում վերջին յերկու տարվա ընթացքում մեռել է 4 միլիոն մարդ: Հարեան Ծանախ գավառում սովից մեռել է 2 միլիոն մարդ, և 400 հազար մարդ վաճառված է ստրկութան: 1921 թվին Չինաստանում գեներալների անընդհատ պատերազմների ու դեներալական թարանների պատճառով Վրային անտեսութան քայքայումից տեղի ունեցավ իր չափերով շատնված հեղեղ, փորն ապաստանից զրկեց ու սովամահութան մասնեց 4 միլիոն գյուղացի: Ընդամենը հեղեղից մուժեց 40 միլիոն ընակչություն:

Միայն Սորհրդային Չինաստանում, փորը բռնում է չինական յերկրի մի վեցերորդ մասը, չկա սով: Այնտեղ հողը խրված է կալվածատերերից ու հակահեղափոխականներից և բաշխված է աշխատավոր գյուղացիութան մեջ: Սորհրդային Չինաստանում փոչնչացված են վաչխատական պարտքերը, վարձակալական վճարումները, պակասեցված են հարկերը, ուստի և այնտեղ գյուղացիներն անհամեմատ ավելի լավ են ապրում, գյուղացիներն ըստ արժանավույն դնահատել են խորհրդային իշխանությունը, նրանք փոչ միայն ողնում են չինական կարմիր բանակին, այլև մասսաներով լրացնում են այդ բանակի շարքերը:

Անասլի կարիքն ու շահագործումը հրում է Հնդկաստանի բազմամիլիոն գյուղացիութանը նույնպես իրենց և անդլխական ճնշողների գեծ պայքարի: Գյուղացիական ապստամբություններն այնտեղ յերբեմն վերածվում են կառավարական դարձրի գեմ իսկական ճակատամարտերի:

Ինչպե՞ս են ապրում բանվորներն ու գյուղացիները դաղութային ու կախյալ յերկրներում:

ԲԱՍԷՆԵՎԻԿՆԵՐԸ ՆԱԽԱՏԵՍԵԼ ԵՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԱՆԵՈՒՍԱԺՆԻՈՒԹՅՈՒՆԸ

Իայլլեիկների համար համաշխարհային տնտեսական ճգնաժամն անպատելի էր: Մեր կուսակցական համադումարների ու կոմունիստական ինտերնացիոնալի փորձումներում ճգնաժամի սկզբից գեռ շատ առաջ ստույգ մատնանշված էր ճգնաժամի անխուսափելիությունը և տնտեսության նեխող կապիտալիստական սխտեմի քայքայումը: Կուսակցական փորձումների ճշտությունը ներկայումս հաստատում է ինքը կյանքը:

Իայլլեիկների կոմունիստական կուսակցությունը կարողացավ ճիշտ գնահատական տալ կապիտալիզմի դրության և ճգնաժամի անխուսափելիության մասին, փորովհետե նա ունի մարքսիստական-լենինյան թեորիա:

Մարքսն ու Լենինը իսկական գիտական ճանապարհով քննեցին և սովեցին այն բոլոր հակասություններն ճիշտ գնահատականը, վորոնցով տառապում է ներկայումս կապիտալիզմը: Նրանք մանրամասնորեն նկարագրեցին կապիտալիզմի ու նրա վերջին ետապի իմպերիալիզմի հիմնական դժերը: Մարքսն ու Լենինը անհերքելիորեն ապացուցեցին կապիտալիստական հասարակարգի կործանման անխուսափելիությունը, պրոլետարական հեղափոխությունների անխուսափելիությունը և իշխանության անցումը բանվոր դասակարգի ձեռքը, փորը կկառուցի սոցիալիստական նոր հասարակություն:

Կապիտալիստական սխտեմի ճգնաժամը, փորի վայրուն ապացույցն է ժամանակակից համաշխարհային ճգնաժամը, անբուժելի յե: Նրա արմատները մնտուել է պեաք այն հակասությունների մեջ, վորոնք գտնվում են կապիտալիզմի եյության ու գաղագաման հիժքում:

Կապիտալիստական սխտեմի եյության բնութագրին մենք կանցնենք այժմ:

Ինչո՞ւ կոմունիստական կուսակցությունը նախատեսավ կապիտալիզմի այժմյան ճգնաժամը:

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բուրժուազիան ու պրոլետարիատը կապիտալիստական հասարակության հիմնական դասակարգերն են: Նրանց փոխհարաբերությունները, նրանց պայքարը, նրանց շահերի ներհակությունը յուրաքանչյուր կապիտալիստական յերկրի կարևորագույն հատկանիշն են: Բուրժուազիան լանտլթյան ու խաբեբայության միջոցով ձգտում է պահելու իր տիրապետությունը: Պրոլետարիատը ձգտում է փոչնչացնել կապիտալիստական ստրկությունը, փոխարինելով այն սոցիալիզմով:

Կապիտալիզմի որոք բուրժուազիան է տիրում բոլոր գործա-

բաններին, արանսպորտին, բնական հարստութիւններին: Ինչ-
պիսի ցուցանակ եւ կրելու լինի կառավարութիւնը կապիտալիզմ-
տական յերկրում, այդ ցուցանակի տակ միշտ եւ թաղանթում ե
կապիտալիստների դասակարգի գիկատուրան: Քաղաքական
իշխանութիւնը գտնվում ե բուրժուազիայի ձեռքում: Բուր-
ժուական պետութեան նպատակն ե՝ իշխանութեան ապարտի
ոչնութեամբ (գործք, վատիկանութիւն, ստահմանափոխներ, պար-
լամենտ, դպրոցներ, տերութիւններ) պահպանել կապիտալիստական
սեփականութիւնը, պահպանել բուրժուազիայի իշխող դրութեա-
նը:

Կապիտալիստների ձեռքում գտնվում են գործարանը մեքե-
նաներով ու հաստոցներով, պահեստներում յեղած վառելիքային
ու հումքայինը և ամեն տեսակ սփանդակ նյութեր: Բայց այդ բո-
լորը մեռյալ են մինչև, վոր նրանց չի դիպել մարդու ձեռքը: Կա-
պիտալիստը վարձում ե բանվորներ, դնում ե, վորպէս ապրանք
բանվորական ուժ: Գնելով բանվորի բանվորական ուժը, կապի-
տալիստը ստիպում ե նրան աշխատել: Մեքենաներն ու հաստոցնե-
րը չարժ վել են սկսում: Արտադրութիւնը գործի յե դրվում: Փար-
բիկանալ պահեստները լցվում են նորանոր ապրանքներով, վոր
պատրաստ են արդեն վաճառքի համար:

Իսկ ի՞նչն ե ստիպում բանվորին վաճառել իր բանվորական
ձեռքերը կապիտալիստին և այդպիսով հարստացնել նրան: Բան-
վորը կապիտալիզմի որոք նույնպէս սեփականութիւն ունի: Այդ
սեփականութիւնը նրա բանվորական ուժն ե: Սակայն նա չունի
մեքենաներ ու հաստոցներ: Նա վաճառում ե իր բանվորական ուժը
արտադրութեան միջոցների տիրաջը, վորպէսզի չմեռնի ջարդից:

Բանվորները կապիտալիստի համար ձրի չեն աշխատում: Կա-
պիտալիստը վճարում ե բանվորին բանվորական ուժի համար: Նա
տալիս ե նրան նրա աշխատանքի «արդարացի» վճարը: Տալիս ե
ճիշտ այնքան, վոր բանվորը կարողանա պահել իրեն և իր ընտա-
նիքին, կարողանա շարունակել իր խղճուկ, կիսաքաղց գոյութեա-
նը:

Բայց սրտեւտարը բանվորական որվա ընթացքում անհամե-
մատ ավելի ապրանք ե արտադրում, քան թե հարկաւոր եր ար-
տադրել արդարացնելու համար իր ստացած աշխատավարձը:
Այդ ավելորդ արժեքը, վորը բանվորն արտադրում ե անվճար, հենց
կազմում ե կապիտալիստների հարստանալու աղբյուրը: Այդ հա-
վելյալ արժեքի համար ե, վոր կապիտալիստը դնում ե բանվորա-
կան ուժը: Հենց դրանումն ե կապիտալիստական շահագործման
խմաստը:

Բուրժուազիային պատկանում են արտադրութեան միջոցնե-
րը: Բայց բուրժուազիան գոյութեան ունենալ չի կարող առանց
բանվոր դասակարգի: Բանվորների արյունն ու ջրտինքը կապիտա-
լիստները դարձնում են վոսկի, վորը հնարավորութեան ե տալիս
նրանց շքեղ ու հարուստ կյանք վարելու:

Կապիտալիստների գործը չե, թե ինչպէս են ապրում բան-
վորները, ունե՞ն նրանք արդյոք այն ամենը, ինչ անհրաժեշտ ե
նրանց, թե սոված են նրանք: Կապիտալիստներն ապրանք են ար-
տադրում շահույթի համար և վոչ թե աշխատաւոր մաստաների
պահանջների բավարարման համար:

Բայց կապիտալիստական ձեռնարկութեանները միայն առյե-
րևայթ են միանգամայն ինքնուրույն և անկախ ամբողջ հասա-
րակութեանից: Իսկ իրոք առանձին Փարբիկաների ու գործարան-
ների միջև, արտադրութեան առանձին ճյուղերի միջև, առանձին
աշխատավորների միջև, վորոնք ցրված են ամբողջ աշխարհում,
գոյութեան ունի ամենասերտ կապ ու կախում: Յերկրներից վո-
մանք արտադրում են մեքենաներ ու դյուրանտետեական մեքենա-
ներ այլ յերկրներ համար, արդյունաբերութեան յուրաքանչյուր
ճյուղ կամ դյուրանտետեութեան ճյուղ սերտորեն կապված ե մի
այլ ճյուղի հետ և չի կարող գոյութեան ունենալ, յեթե նրանից
չզնեն նրա ապրանքները:

Կապիտալիզմի որոք յուրաքանչյուր յերկրի տնտեսութեան և
մինչև իսկ ամբողջ աշխարհի տնտեսութեանը հազարավոր թելե-
րով կապված են միմիկանց հետ և կազմում են մի հասարակական
տնտեսութեան: Յել միևնույն ժամանակ յուրաքանչյուր ձեռ-
նարկութեան չի պատկանում ամբողջ հասարակութեանը, այլ
պատկանում ե առանձին կապիտալիստին: Նա ազատ իրավունք
ունի ընդարձակելու կամ կրճատելու իր ձեռնարկութեանը, կամ
ամենեկին փակելու այն: Նա արտադրում ե այն ապրանքը, վորը
պետք ե իրեն: Ամբողջ արտադրութեանը կապիտալիզմի որոք
ծառայում ե մի նպատակի, այն ե՝ շահույթի, հարստացման:

Արտադրութեան հասարակական բնույթը և կապիտալիստա-
կան անձնական յուրացումը—ահա կապիտալիստական հասարա-
կութեան հիմնական հակասութեանը նրա բոլոր «ցովերի» բուն
տրմատը:

ՈՍՄՄ, վորտեղ այդ հակասութեանները գոյութեան չունեն,
վորտեղ արտադրող սրտեւտարիստը ինքն ել հանդիսանում ե ար-
տադրութեան բոլոր միջոցների սեփականատերը, այն հարցը, թե
վորքան և ինչպիսի ապրանք ե հարկաւոր արտադրել, լուծվում ե
պլանով: Այդ պլանային առաջադրանքները քննում են արտադրու-
թեան մեջ գրավող բոլոր բանվորները: Բանվորները հաճախ
եյական փոփոխութեաններ են մտցնում նախնական պլանի մեջ,
առաջադրում են հանդիպական պլաններ:

Կապիտալիստական յերկրներում ղեկավարում ե ու «պլանա-
վարում» ե արտադրութեանը ձեռնարկատերը: Առավելադույն
շահույթի յետևից ընկնել—ահա թե ինչ ե գտնվում նրա տնորի-
նութեան հիմքում: Նա չգիտե, թե կարող են արդյոք շուկայում
վաճառվել իր ձեռնարկութեան մեջ արտադրած ապրանքները թե
վոչ: Կապիտալիստական տնտեսութեանն ի տարբերումն մեր
խորհրդային սոցիալիստական տնտեսութեան, գտնվում ե տնտե-
սական

խիայի (անսլանայնութեան, անկարգակերպութեան) իշխանութեան տակ: Արտադրութեան անարխիան հանդիսանում է կապիտալիզմի հիմնական հատկանիշներից մեկը:

Վո՞րն է կապիտալիզմի հիմնական հատկանիշները:
Ի՞նչ է արտադրութեան անարխիա:

ՃԳՆԱԺԱՄԵՐԸ ԿՍՊԻՏԱԼԻԶՄԻ ՈՐՈՔ ԳՆԱԿՐԱԿՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐ ԵՆ

Արտադրութեան անարխիան կապիտալիզմի որոշ առաջացում է ապրանքների գերարտադրություն:

Ստանձին կապիտալիստների միջև տեղի չե ունենում կատարել մրցում (կոնկուրենցիա), իրենց ապրանքներն արագ վաճառելու միջոցով ավելի շատ շահույթ ստանալու համար: Յուրաքանչյուր կապիտալիստ ձգտում է ավելի շատ և ավելի աժան ապրանք արտադրել, վորպեսզի կարողանա շուկայից վանել իր հակառակորդին: Հասնում է այնպիսի ժամանակ, յերբ ստացվում է, վոր ավելի շատ ապրանք է արտադրված, քան շուկայում դնորդներ կան նրանց համար: Այն ժամանակ առաջանում է, ինչպես ասում են, գերարտադրութեան ճգնաժամ: Գերարտադրութեան այդպիսի ճգնաժամ է ներկայիս տնտեսական ճգնաժամը:

Իսկ ինչու դնորդներ չկան արտադրած ապրանքի համար: Չե՞ վոր քանվորներն ու գյուղացիները միջերգներն, կոշիկներն ու հագուստեղենի կարիք ունեն: Այդ ապրանքներն արտադրութեան համար շատ մեքենաներ են պետք: Թվում էր, թե դնորդներ այդ ապրանքների համար միշտ էլ կհարվեն: Սակայն այդ այդպես չէ: Կապիտալիստներն ամենևին չեն մտածում լայն խավերի կարիքների մասին, ընդհակառակը, նրանք աշխատում են ամեն կերպ իջեցնել քանվորների աշխատավարձը և քայքայել գյուղացիներին, չնչին դներով գներով վերջիններս մթերքները: Տնտեսության կապիտալիստական սխտեմը կառուցված է քանվորների ու գյուղացիների՝ կապիտալիստների ու կալվածատերերի ձեռքով շահագործման վրա: Կապիտալիզմի յերկրներում, քանվորներն ու գյուղացիներն աշխատում են վոչ թե իրենց համար, ինչպես այդ տեղի ունի Սոցիալիստական Միության մեջ, այլ իրենց շահագործողների՝ կապիտալիստների, կալվածատերերի, կուլակների համար:

Միլիոնավոր մարդիկ սովում են, ման են գալիս վոսարորիկ ու կիսամեքիկ, բայց չեն կարողանում գնել իրենց համար անհրաժեշտ իրերը:

Կապիտալիստական արտադրության վիթխարի աճման ու բանվորա-գյուղացիական մասնաների չքավորության այդ հակասությունների մեջ է կապիտալիզմի որոշ յեղած ճգնաժամերի կարևորագույն պատճառներից մեկը:

Ի՞նչ է գերարտադրության ճգնաժամը:

Ինչո՞ւ չեն աղքատանում կապիտալիզմի որոշ բանվորներն ու գյուղացիները:

Ինչո՞ւ չե անխուսափելի կապիտալիզմի սնանկությունը:

ԼԵՆԻՆԸ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԵՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կապիտալիզմի՝ մեր բնութագրած բոլոր հակասությունները հատուկ որոշություն ստացան ներկա դարի սկզբին, յերբ կապիտալիզմը թևակոխեց իր դարգացման բարձրագույն և վերջին փուլը, աստիճանը, այն է իմպերիալիզմի աստիճանը:

Լենինն այսպես էր գրում իմպերիալիզմի մասին, վորպես կապիտալիզմի նոր աստիճանի մասին.

«Իմպերիալիզմն աճել է, վորպես կապիտալիզմի հատկությունների զարգացում ու անմիջական շարունակություն: Իմպերիալիզմը հանդիսանում է կապիտալիզմի զարգացման նոր աստիճանը. սակայն այդ նոր աստիճանը հանդիսանում է նախորդ աստիճանի,—արդյունաբերական կապիտալիզմի շրջանի անմիջական շարունակությունը: Արդյունաբերական կապիտալիզմին հատուկ հիմնական ու վճռական հակասությունները,—գերարտադրության անարխիան, հակասությունները բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև, պայքարը կապիտալիստների բանակում, ճգնաժամերը,—վոչ միայն չեն վերանում իմպերիալիզմի որոշ, այլ ընդհակառակը, հասնում են բարձրագույն սրության»:

Լենինը այսպես է նաև վորոշել իմպերիալիզմի ելությունը:

«Իմպերիալիզմը կապիտալիզմի հատուկ պատմական շրջանն է: Նա ունի յեռակի առանձնահատկություն.—իմպերիալիզմը 1) մոնոպոլիստական կապիտալիզմ է, 2) պարագլոտական կամ նեխող կապիտալիզմ, 3) մեռնող կապիտալիզմ»:

Քննենք ավելի մանրամասնորեն իմպերիալիզմի այդ հիմնական գծերը:

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ՄՈՆՈՊՈԼԻՍՏԱԿԱՆ ԿՍՊԻՏԱԼԻԶՄ Ե

Սոցիոլոգիա մանր ու միջակ կապիտալիստների միջև մղած պայքարում հաղթում են խոշոր կապիտալիստները: Սոցիոլոգիա կապիտալիստական արտադրության հաղթանակը մանր արտադրության դեմ առաջացնում է կապիտալի կոնցենտրացիա (խոշորացում) և կենտրոնացում (համախմբում):

Կապիտալը հավաքվում է խոշորագույն կապիտալիստների ձեռքում: Մրցումները վերացնելու և մեծ շահույթներ ստանալու համար նրանք համախմբվում, կազմում են միություններ (տրեստներ, սինդիկատներ և այլն): Այդ միությունները ավելի բարձր գներ են սահմանում ապրանքների համար, միատեղ խմում են աժան ապրանքով իրենց մրցակիցներին (կոնկուրենտին), միասին գնում են հումույթ, վառելիքային, սահմանում են ընդհանուր պայմաններ բանվորական ուժ վարձելու ժամանակ: Սոցիալիզմը

կապիտալիստների այդպիսի համախմբումները և միությունները կոչվում են մոնոպոլիաներ :

Մոնոպոլիաներ գոյություն ունեն իմպերալիստական բոլոր յերկրներում, նրանք կապված են բանկերի հետ. բանկերը մոնոպոլիաներին դրամ են տալիս և իրազործում նրանց վրա կոնտրոլը: Արդյունաբերական կապիտալիզմը ներառում է (համախմբվում է, կցվում է) բանկային կապիտալի հետ: Բանկերի և արդյունաբերողների պարագլուխները կենտրոնացնում են իրենց ձեռքում «իրենց» կապիտալիստական պետությունների բախտը: Պաշտոնական կառավարությունները դառնում են հարուստ դրամատերերի հաստիքի գործակալները:

Որինակ՝ Գերմանիայում 1921 թվին գերմանական ամբողջ տնտեսությունը ղեկավարում էին յերկու-յերեք հարյուր հազուց բաղկացած մոնոպոլիստ-կապիտալիստներ, իսկ ներկայումս ամբողջ Գերմանիան ղեկավարում են վաթսուհինյոթանասուն կապիտալիստ: Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1923 թվին տրեստների ու բանկերի ղեկավարությունը գտնվում էր 93 կապիտալիստի ձեռքում: Ներկայումս Ամերիկայի իսկական տեր ու տնօրենք հանդիսանում են 60 միլարդեր կապիտալիստներ:

Սակայն կապիտալիստական մոնոպոլիան չի վերացնում մրցությունը նրանց մեջ: Ընդհակառակը, իմպերալիզմի չրջանում մրցումն ավելի յե սրվում: Առաջ պայքար էլին մղում միմյանց դեմ առանձին կապիտալիստները: Իսկ այժմ մրցողներն են հանդիսանում հուժկու մոնոպոլիաները կապիտալիստական յերկրների ներքում և կապիտալիստների միջազգային մոնոպոլ միությունները:

Պայքարը մոնոպոլիաների միջև միջազգային պայքարի բնույթ է ստանում աշխարհի վերաբաժանման համար, գաղութների բալանի, հումույթի աղբյուրների և սպառման շուկաների գրավման համար: Այդ պայքարն անխուսափելի յե դարձնում պատերազմներն իմպերալիստների միջև և առաջացնում է իմպերալիստական յերկրների սպառազինման անընդհատ աճում:

Իմպերալիզմի պայմաններում ծայր աստիճան սրվում է պայքարը բանվոր դասակարգի և կապիտալիստների միությունների միջև: Արդ տեղի յե ունենում այն պատճառով, վոր իմպերալիզմի ժամանակ ուժեղանում է բանվորների շահագործումն ու ազատացումը: Բանվորները դուրս են գալիս կազմակերպված ձևով, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ՝ ընդդեմ նրանց վրա հարձակվող իմպերալիզմի:

Բանվորներն իրենք ավելի ու ավելի հաճախ ու վճռականապես անցնում են հարձակման կապիտալիստների դեմ, առաջադրելով, վորպես պայքարի լողունք կապիտալիզմի տապալումն ու պրոլետարատի ղեկատուութա հաստատելը:

Ի՞նչն է մոնոպոլիան իմպերալիզմի որոք:

Ինչո՞ւ իմպերալիզմի որոք սրվում են կապիտալիզմի հակասությունները:

Ինչո՞ւ իմպերալիզմի որոք անխուսափելի յեն պատերազմները:

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ՆԵՆՈՂ ԿԱՊԻՏԱԼԻԶՄ Ե

Կապիտալիստական մոնոպոլիաների գոյացումը առաջացնում է կապիտալիստական հասարակակարգի նեխում ու քայքայում: Այդ նեխումն առանձնապես ուժեղանում է այժմյան ճգնաժամում, ընթանում է զանազան ուղղություններով և ընդգրկում է կապիտալիստական հասարակության կյանքի բոլոր կողմերը:

ՅԵՆԵԻԿԱՅԻ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ

Կապիտալիստները շուկայում գրավելով մենաշնորհային դրություն, այլևս շահագործված չեն լինում տեխնիկայի դարաշրջան մեջ: Նրանք կասեցնում են տեխնիկական ամենաարժեքավոր դյուտերի գործադրությունը, և մինչև իսկ վոչնչացնում են այդ դյուտերը: Իսկ ներկայումս ճգնաժամի միջոցին նրանք մինչև իսկ բացահայտ կերպով հանդես են գալիս տեխնիկայի դեմ:


Բուրժուական դիտնականների մեջ ավելի ու ավելի հաճախ ձայներ են լսվում, վոր ճգնաժամի պատճառը տեխնիկայի դարաշրջումն է: Նրանք ասում են, վոր մեքենաների գործադրությունն առաջացրեց պարանքների գերարտադրություն և մասսայական գործադրություն և վոր իբր հարկավոր է դադարեցնել տեխնիկայի աճումը և վերադառնալ աշխատանքի հին, պապենական վերին: Այն ժամանակ, նրանց ասելով կլինի բարգավաճման նոր դար: Ահա թե մինչև ինչ աստիճանի յեն հասել կապիտալիստների կործանվող դասակարգի ներկայացուցիչները:

Ներկայումս կապիտալիզմն այլևս չի կարող ապահովել տեխնիկայի արագ աճումը, վոր անհրաժեշտ է ամբողջ տնտեսության աճման համար:

Կապիտալիզմի նեխումն արտահայտվում է նաև նրանով, վոր դադարել է նոր գործարանների ու Փարրիկների կառուցումը: Ծառ հին գործարաններ ու Փարրիկներ աշխատում են վոչ լրիվ բեռնավորումով, տասնյակ միլիոն բանվորներ չեն մասնակցում արտադրությունը:

Կապիտալիզմի նեխումն տարածվում է նաև գյուղատնտեսության վրա, վորտեղ խոշոր գյուղատնտեսական մեքենաների գործադրությունը դեմ է առնում մի շարք խոչընդոտների: Այնպիսի մեքենաներ, ինչպիսին են՝ կալտոլ, հնձող, շարքացան մեքենաներն ադտադործվում են ամենապակասը 70 հեկտար տարածություն ունեցող տնտեսությունում, իսկ յոգեչարժ կալսիչն ու ծանր տրակտորները՝ 150-250 հեկտարի տնտեսությունում: Այդ պատճառով

79
60585
БИБЛИОТЕКА
ИСТОРИЧЕСКО-ЭКОНОМИЧЕСКАЯ
СССР



և հենց իրենց արժեքով այդ մեքենաներն անմատչելի չեն գյուղացիներին համար: Միայն կապիտալիստները, կալվածատերերն ու կուլակները կարող են ձեռք բերել այդպիսի մեքենաներ: Իսկ գյուղացիներին հիմնական մասսան աշխատում է իր փոքրիկ հողամասերում արտադրութայն պայմանական միջոցներով: Այդ դեռ չի է, ինչպես մենք գիտենք, գյուղատնտեսութայն մեջ բերքը կապիտալիզմի պայմաններում վոչ միայն չի թեթևացնում գյուղացիներին ու բանվորներին դրությունը, այլ ինչպես այդ տեղ յե ունենում ներկայումս ուժեղացնում է միայն ընդհանուր ճգնաժամը:

Ինչո՞վ է արտահայտվում տեխնիկայի, արդյունաբերութայն և գյուղատնտեսութայն զարգացման կանգառումը կապիտալիստական յերկրներում:

ՈՎ Ե ԼԱՎ ԱՊՐՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Կապիտալիզմի աճումով աճում են կապիտալիստների կուսակումները, աճում է կապիտալիստների բաժինը յերկրի յեկամուտների մեջ: Ավելի ու ավելի մեծ հարստություններ են դիպում մի բուռ կապիտալիստների ձեռքում:

Գերմանիայում ժողովրդական յեկամուտի 45 տոկոսն ընկնում է կապիտալիստներին, ՀԱՄՆ—46 տոկոսը, Անգլիայում—55 տոկոսը:

Կապիտալիստական խոշորագույն յերկրներում ժողովրդական յեկամուտի մոտ կեսը, յեկամուտ վոր ստեղծված է բանվորների ու գյուղացիների աշխատանքով, ընկնում է բուրժուազիային, վորը կազմում է բնակչութայն $\frac{1}{20}$ մինչև $\frac{1}{14}$ մասը միայն:

Անգլիայում բնակչութայն 2% կազմող հարուստներին պատկանում է յերկրի բոլոր հարստությունների կեսից ավելին (60 %-ը), իսկ Ամերիկայում, վորտեղ յերկրի հարստությունը վորոշվում է 480 միլիարդ դոլլար խոշորագույն գումարով, բնակչութայն 1 տոկոսը կազմող մի բուռ կապիտալիստներին բաժին է ընկնում յերկրի հարստությունների 60 տոկոսը:

Իմպերիալիզմի որոք արագ աճում են այն մարդկանց խավերը. վորոնք ապրում են, վորպես պարպիտ, ձրիակեր, չեն զբաղվում ողտակար աշխատանքով: Այդ մարդիկ կոչվում են «անտյե»։ Նրանք ապրում են բանվորներին շահագործելու միջոցով կուսակած փողով սպեկուլյացիայով են զբաղվում և «խուզում են կուպոններ», այսինքն՝ տոկոսներ են ստանում արժեքավոր թղթերից ու փոխառություններից: Այդ ձրիակեր «անտյեները» իրենց ամբողջ ժամանակն անց կեն կացնում պարապ—սարապ, ջեֆերով ու շվայտությամբ: Այդպիսի պարապիտներ առանձնապես շատ կան Ֆրանսիայում, Անգլիայում, Ամերիկայում:

Այսպես, կապիտալի յերկրներում, հեղհետե յերբ աճում են հասարակական հարստությունները, աճում է հասարակական

տնտեսաարտադրությունը. աճում և խորաճում է անդունդը բուրժուազիայի ու բանվոր դասակարգի միջև:

Ինչո՞ւ չեն կապիտալիզմի յերկրներում կապիտալիստները հարքստանում, իսկ բանվորներն՝ աղքատանում:

ՈՊՐՏՈՒՆԻՉՄՆ ՈՒ ՍՈՅԻԱԼ-ՅԱՇԻՉՄԸ

Իմպերիալիստական տնտեսարուստ յերկրներում քայքայման թույնը թափանցում է բանվոր դասակարգի առանձին խավերի մեջ: Չե վո՞ր դասակարգիը միմեյանցից չեն առանձնացված չինական պարսպով, ուստի և իմպերիալիստական բուրժուազիայի տեսակետները յուրացվում են առանձին բանվորների կողմից, մանավանդ այն բանվորների, վորոնք պատկանում են բանվոր դասակարգի վերնախավին, վորը նյութապես ավելի ապահովված է և կապված է բուրժուազիայի հետ: Այդպիսի բանվորներին անվանում են բանվորական արիստոկրատիա: Փոխանակ կուպիտուկապիտալիստներին դեմ, բանվորներին այդ խմբակները ձգտում են հաշտ ապրել կապիտալիստների հետ և նույն բանին են կոչանում մյուս բանվորներին: Բուրժուազիայի հետ այդպիսի համաձայնողականությունը կոչվում է ոպորտունիզմ:

Ոպորտունիզմի անտեսական պատճառն այն է, վոր բուրժուազիան ի հաշիվ հսկայական գերաշահույթների, վոր ստանում է շուկայի մենաշնորհային իր դրությունից, կապիտալների արտահանումից և գաղութների կողոպուտից, հնարավորություն է ստանում կաշառելու ամենից վորակյալ բանվորներին, բարձրացնելու նրանց աշխատավարձը, բարելավելու նրանց կյանքի կուրտուր-կենցաղային պայմանները և այլն:

Սակայն ոպորտունիզմը չի կարող տիրապետել ումբողջ բանվորական շարժմանը: Ամբողջ բանվորական դասակարգին կաշառել չի կարող մինչև իսկ ամենահարուստ իմպերիալիստական բուրժուազիան: Իսկ այժմ, կապիտալիզմի ուժերի խոր հյուծման շրջանում, յերբ ուժեղանում է բանվոր դասակարգի աղքատացումը և իմպերիալիստների հարձակումը նրա դեմ, ավելի ուժեղ չափով են վոչնչանում ոպորտունիզմի արմատները մասսաների մեջ:

Բանվոր դասակարգն արագ հեղափոխականացվում է, թոթափում է իր վրայից՝ բուրժուազիային վաճառված առաջնորդների ազդեցությունը: Իսկ ոպորտունիստների հիմնական կադրերը բոլորին հայտնի վանդելովեյրգի, կուտուրիս, Հիլֆորդինգի, Ռաստ Բաուերի, Հենդերսոնի, Լեոն Բլյուսի և նրանց արժանավոր ողնական ոուսական մենչեիկների՝ Աբրամովիչի ու Իանի, Տրոցկու է նրա գինահիցների դեկավարությամբ ներկայումս դարձել են իմպերիալիզմի բացահայտ աշխատակիցները: Նրանք վերստեղիկ են սոցիալ-ֆաշիստ-դավաճանների և բանվոր դասակարգի թշամիներին: Սոցիալ ֆաշիստները կոմունիզմի ու ինքնագային

Միութեան ամենավտանգի թշնամիներն են, բանվոր դասակարգի դահիճներն են:

Պայքարը սոցիալ-Ֆաշիզմի դեմ նույնպես պարտադիր է համաշխարհային պրոլետարիատի համար, ինչպես և պայքարն իմպերիալիզմի դեմ, յեթե պրոլետարներն ուզում են ապաստել իրենց և աշխատավոր լայն խավերին կապիտալիստական ծանր լծից:

Վերջն է ոպորտունիզմի ու սոցիալ-Ֆաշիզմի ծագման պատճառը:

ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՆՆԵՈՒՄԸ

Նեխումն ու քայքայումն ընդգրկել է բուրժուական յերկրների նաև գիտութեանը, արվեստը և ամբողջ կուլտուրան: Բուրժուական կրճատում է բարձրագույն կրթական հիմնարկների քանակը, վորովհետև չափից շատ են գործազուրկ ճարտարագետներ, տեխնիկներ, բժիշկներ, ուսուցիչներ: Գիտութեանը, գրականութեանը, թատրոնները, կինոները, թերթերը—բայրն են դանդաղում են կապիտալիստների ծառայութեան մեջ: Ամեն տեղ տիրում է կաշտոքը: Ամեն տեղ վաճառքն ու նեխումը:

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՐՇԱՎԸ

Իմպերիալիզմի նեխումն առանձնապես վառ յերևում է նբանսով, վոր հակաշխարհային միջոցներ ու աշխատանք են գործադրվում բանակի ու նավատորմի սպառազինութեան, նոր համաշխարհային սպանդի պատրաստութեան և ամենից առաջ ԽՍՀՄ դեմ պատերազմի պատրաստութեան համար:

1914—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմում սպանվել է 10 միլիոն մարդ և 20 միլիոն հոգի հաշմանդամ է դարձել: Պատերազմից առաջացած ավերումները հավասար են կոլոզ յերկրների ունեցվածքի կեսին: Պատերազմը կլանեց ամբողջ սերունդների, —ասանյակ միլիոնավոր մարդկանց ծանր աշխատանքի արդյունքը: Յեթե այդ աշխատանքը և այդ հարստութեանները գործազուրկ յին ոպտակար արտադրութեան համար ամբողջ հասարակութեան ոգտին, ապա արագ կվոչնչացվեյին լայն մասաների չքավորութեանն ու սովը:

Իմպերիալիստական պատերազմից հետո սպառազինումները կապիտալիստական յերկրներում վոչ միայն չպակասեցին, այլև շարունակվում են աճել:

Այսպես կոչվող «մեծ» իմպերիալիստական պետութեանները (Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան) պատերազմից հետո յեռապատկել են իրենց ուղղակի ծախքերը, 1913 թվին Երան ծախսել են սպառազինման վրա 2·300 միլիոն ուրբլի, 1930 թվին՝ 5·700 միլիոն ուրբլի, իսկ 1931 թվին՝ 7·100 միլիոն ուրբլի:

Պատերազմի այդ ուժեղ պատրաստութեանը իմպերիալիստները կամենում օքոդել դինոթափման մասին խոսակցութեաններով:

Ինչպես են սպառազինվում իմպերիալիստները:

Այդ ամբողջն ապացուցում է Լենինի այն խոսքերը, վոր իմպերիալիզմը պարագիտական և նեխող կապիտալիզմն է:

Պատասխանեցեք մանրամասնորեն, թե ինչով է արտահայտվում կապիտալիզմի նեխումը:

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ՄԱՀԱՑՈՂ ԿԱՊԻՏԱԼԻԶՄ Ե

Իմպերիալիզմի որոք յուրաքանչյուր յերկրի տնտեսութեան, ինչպես և համաշխարհային ամբողջ տնտեսութեանը համախմբված է ու կազմում է մի ամբողջական հասարակական տնտեսութեան այն չափով, ինչ այդ հնարավոր է կապիտալիզմի շարժանականերում: Կառուցված են վիթխարի ձեռնարկութեաններ ու ձեռնարկութեանների խմբակներ, վորոնք սերտորեն կապված են միմյանց հետ և չեն կարող աշխատել մեկն առանց մյուսի: Գործարաններից ու Ֆարբիկներինց վրձանք արտադրում են մեքենաներ, մյուսները մշակում են հանք, պողպատ և յերկաթ, ուրիշներն արտադրում են լայն սպառման ապրանքներ: Գյուղատնտեսութեանը տալիս է պարեն ու հումուլթ (բամբակ, կտավատ, կաուչուկ և տեխնիկական դանդաղ մշակույթներ) արդյունաբերութեան համար: Ծնորհիվ ելեկտրակառութեան լայն զարգացած գործադրութեան, հնարավոր դարձավ եներգիտ մատակարարել մի քանի վիթխարի ելեկտրոկայաններից ամբողջ շրջանների, մարդերի և մինչև իսկ յերկրների Ֆարբիկներին ու գործարաններին: Բայց ամբողջ այդ տնտեսութեանը կանգ է առել և դեպի անկումն է գնում՝ միայն իր սեփական շահույթների մասին մտածող կապիտալիստների դասակարգի ելեկտրութեան շնորհիվ:

Այդ նշանակում է, վոր կապիտալիզմն իր զարգացման մեջ արդեն փակուղու առաջ է կանգնել: Հասարակական տնտեսութեան հետագա աճումը և աշխատավոր մասաների փրկութեանը կարիքից ու մահացումից հնարավոր է միայն կապիտալիստական հասարակակարգի վոչնչացման միջոցով, միայն տնտեսութեան դեկալարութեանը նրանց ձեռքն անցնելով, ովքեր ստեղծել են և ստեղծում են յերկրի յերեսին ամբողջ հարստութեանը, հնարավոր է միայն սոցիալիզմին անցնելով:

Այդ պատճառով Լենինը իմպերիալիզմը անվանում էր մահացող կապիտալիզմ, կապիտալիզմի զարգացման վերջին ետադր (շրջանը):

Ինքը կապիտալիզմը նյութական հիմքեր է ստեղծել սոցիալիզմին անցնելու համար:

Նա ստեղծել է կատարելագործված տեխնիկա և այդ տեխնիկայի վրա հիմնված զարգացած տնտեսութեան, և դրա հետ միասին նա յև ստեղծել այն հեղափոխական ուժը, վորը կարող է տա-

պալի կապիտալիզմին և կառուցել սոցիալիզմ: Դա բանվոր դասակարգին է, վոր կապիտալիզմի ամբողջները գրոհելու յե առաջնորդում էր դաշնակիցներին, — ամբողջ աշխարհի աշխատավոր գյուղացիներին և ճնշված ժողովուրդներին:

Վոր կապիտալիզմը հավիտենական չէ, վոր նա իր տեղը պետք է գիջի սոցիալիզմին, այդ ցույց է տալիս մեր փորձը, Խորհրդային Միութեան բանվորների ու գյուղացիների փորձը:

Ինչո՞ւ իմպերիալիզմը մահացող կապիտալիզմ է:
Ինչո՞ւ կապիտալիզմը պետք է փոխարինվի սոցիալիզմով:

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՃԴՆԱԺԱՄՆ ՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՍԿԻԶՐԸ

Իմպերիալիստական պատերազմն առանձնապես սրեց կապիտալիզմի բոլոր հակասութիւնները: Այդ պատերազմի ժամանակվանից կապիտալիզմը թեւակոխել է ընդհանուր անկման, ընդհանուր ճգնաժամի շրջանը: Կապիտալիստական սխտեմի այդ ընդհանուր ճգնաժամի ամենալատ արտահայտութիւնը հանդիսանում է Խորհրդային Միութեան գոյութիւնը, սոցիալիզմի հաջող չինարարութիւնը, վորն ավելի ու ավելի յե խարխուղում կապիտալիզմի հիմքերը, մոտեցնում նրա վերջնական կործանումը:

Այդ հիման վրա սրվում է յերկու սխտեմի պայքարը: Կոմբուրժուական դիկտատուրա, կամ պրոլետարիատի դիկտատուրա, — այսպես է գրված ներկայումս հարցը: Իմպերիալիստներն ավելի քան յերբէն պարզ տեսնում են, վոր հասունանում է ամբողջ աշխարհում կապիտալիստական հասարակարգի կործանումը: Նրանք ձեռք են առնում բոլոր միջոցները, վարպետի կասեցնեն վերահաս կործանումը, ճնշել բանվորների ու գյուղացիների հեղափոխական շարժումը, յերկրի յերեսից ջնջեն Խորհրդային Միութիւնը: Սակայն վոչինչ չի սղնում: Կապիտալիստական սխտեմը հիվանդ է անբուժելի հիվանդութեամբ: Հնչում է իմպերիալիստների տիրապետութեան մահվան ժամը:

Կապիտալիստական յերկրների գոյութիւնն ունեցող անհատապարաչափ զարգացման սրենքը, մանավանդ իմպերիալիզմի պայմաններում, մոտենցնում է կապիտալիստական աշխարհի կործանումը, նպաստավոր պայմաններ է ստեղծում պրոլետարիատի հաղթանակի համար:

Վորն է այդ սրենքի էյութիւնը: Ահա թե ինչ է ասում այդ մասին ընկ. Ստալինը,

«Ուսումնասիրելով իմպերիալիզմը, մանավանդ պատերազմի շրջանում, Լենինը յեկամ անհատապարաչափութեան սրենքի յեզրակացութեան, կապիտալիստական յերկրների տնտեսական ու քաղաքական ցատկումնաձև զարգացման յեզրակացութեան:

«Այդ սրենքի իմաստով ձեռնարկութիւնների, տրեստների, արդյունաբերութեան ճյուղերի և առանձին յերկրների

զարգացումը տեղի յե ունենում անհավասարաչափ ձևով, վոչ թե հերթի սահմանված կարգով, վոչ թե այնպես, վոր մի տրեստ, արդյունաբերութեան մի ճյուղ կամ մի յերկիր շարունակ առաջ գնա, իսկ մյուս տրեստները կամ յերկրները յետ մնան հաջորդաբար մեկը մյուսի յետևից, այլ այդ կատարվում է ցատկումներով մի յերկրի զարգացման մեջ ընդհատումներով և այլ յերկրների զարգացման մեջ ցատկումներով դեպի առաջ: Ընդ վորում յետ մնացող յերկրների «միանգամայն որինավոր» ձգտումը հին դիրքերը պահպանելու և նույնչափ «որինավոր» ձգտումն առաջ ցատկած յերկրների կողմից նոր դիրքեր գրավելու առաջացնում է իմպերիալիստական յերկրների դիմում ընդհարումներ, վորոնք անխուսափելի անհրաժեշտութիւն են հանդիսանում: Այդպես եր, որինակ՝ Գերմանիայի հետ, վորը կես դար առաջ ներկայացնում եր իրենից մի հետամնաց յերկիր, համեմատած Ֆրանսիայի և Անգլիայի հետ: Նույնը պետք է ասել և Ճապոնիայի մասին, համեմատած Ռուսաստանի հետ: Սակայն հայտնի յե, վոր արդեն 20-րդ դարի սկզբում Գերմանիան ու Ճապոնիան այնքան հեռուն առաջ ցատկեցին, վոր առաջինը սկսեց անցնել Ֆրանսիայից և սկսեց նեղել Անգլիային համաշխարհային շուկայում, իսկ յերկրորդը՝ Ռուսաստանին: Այդ հակասութիւններից ել առաջացավ, ինչպես հայտնի յե վերջերս տեղի ունեցած իմպերիալիստական պատերազմը»:

Ուժերի հարաբերակցութիւնն իմպերիալիստական պետութիւնների միջև անընդհատ փոխվում է, վորը և առաջ է բերում դանազան ընդհարումներ ու միջնադեպեր: Կապիտալիզմի զարգացման անհատապարաչափութեան անհնար և դարձնում իմպերիալիստների յերկարատև ու կայուն միջադպրոցի միավորութիւնները: «Իմպերիալիզմի համաշխարհային ճակատը դառնում է հեշտ խոցելի հեղափոխութեան կողմից, իսկ առանձին յերկրների կողմից այդ ճակատի ճեղքումը դառնում է հալանական» (Ի. Ստալին):

Դրա հետ միասին բանվորների համար հեշտ և տապալել իմպերիալիզմը, պատուել իմպերիալիզմի շղթան այնտեղ, վորտեղ այդ շղթան թույլ է, «վորտեղ իմպերիալիզմը սակավ չափով է կոփված, իսկ հեղափոխութեան համար հեշտ է ծավալվել: Կապիտալիզմի զարգացման անհատապարաչափութիւնը սոցիալիզմի հաղթանակի հնարավորութիւնն է բացում սկզբում շատ քիչ և մինչև իսկ միայն մի առանձին վերցրած կապիտալիստական յերկրում» (Ստալին):

1917 թվին իմպերիալիստական այլ յերկրների մեջ Ռուսաստանը հանդիսացավ ամենից թույլ ողակը, և պրոլետարիատը տապալեց այնտեղ բուրժուազիայի տիրապետութիւնը և այսպիսով իսկ սկսեց համաշխարհային պրոլետարական հեղափոխութիւնը:

Պրոլետարական դիկտատուրայի հաղթանակը ԽՍՀՄ մեջ

պցում և ուժեղացնում է կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը վոչ միայն այն պատճառով, վոր աշխարհի մի վեցերորդ մասը կտրվել է կապիտալիստական սիստեմից և այդ կրճատել է կապիտալիզմի գործունեության ասպարեզը, այլև այն պատճառով, վոր մեր յերկիրը դարձել է բոլոր ճնշվածների ու շահագործվողների համաշխարհային հեղափոխական շարժման հենարանը, միջադրային հեղափոխության ոչախը:

Հանձինս ԽՍՀՄ համաշխարհային պրոլետարիատն առաջին անգամ գտավ իր հայրենիքը: ԽՍՀՄ սոցիալիզմ կառուցող պրոլետարիատը դարձել է համաշխարհային պրոլետարիատի հարվածային բրիգադը:

Ինչպե՞ս յե ԽՍՀՄ գոյությունը խարխլում կապիտալիզմի հիմքերը և մոտեցնում նրա վերջնական կործանումը:

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

Սոցիալիստական տնտեսության չտեսնված աճումը Խորհրդային Միության մեջ ապահովվում է այն առավելություններով, վոր գտնվում են խորհրդային հասարակակարգի մեջ:

Այդ, իհարկե, չի նշանակում վոր մեր ճանապարհին չկան դժվարություններ: Մենք ժառանգել ենք ցարից, կալվածատերից, կապիտալիստներից տեխնիկապես հետամնաց տնտեսություն, մեղանում պակասում են մասնադետներ շինարարության համարյա բոլոր բնագավառներում, մեղանում տակավին բավականաչափ ապրանք չկա՝ լրիվ բավարարելու համար աշխատավորների աճող բոլոր պահանջները: Կապիտալիստական կործանվող դասակարգերի մնացորդները կատաղորեն դիմադրում են սոցիալիզմի հաղթական հարձակմանը:

Սակայն այդ բոլոր դժվարությունները հաղթահարելի յին: Մեր դժվարությունները աճման դժվարություններ են: «Այդ պատճառով հենց իրենց դժվարությունների մեջ, —ինչպես ասում է ընկ. Ստալինը.— գտնվում է նրանց հաղթահարման հիմքը»:

Թեև կոխելով սոցիալիզմի շրջանը, մենք արդեն իսկ սկսում ենք ազատվել այդ դժվարություններից:

ՄԵՐ ԲՆԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մենք ունենք աճման իրոք անսպառ հնարավորություններ: Մեր շինարարության հնարավորությունների դնհատման ժամանակ ամենից առաջ հարկավոր է նկատի ունենալ մեր վիթխարի բնական հարստությունները: Ցարի որոք այդ հարստությունները շատ քիչ էլին ոգտագործվում: Մենք միայն այժմ իսկական ձեռք սկսում ենք հետախուզել բնական հարստությունները, թափանցում ենք մեր անծայրածիր յերկրի լեռների, ճահիճների, ստափաստանների, անտառների դաղտնիքների մեջ:

Հետագոտված և ոգտագործվող մեր բնական հարստություն-

ները մի ջնջին մասն են կազմում քարածխի, յերկաթի, նավթի, ջրային աղբյուրների այն բոլոր պաշարների, վորոնց ոգտագործմանը մենք դեռ նոր ենք անցնում: Որինակ՝ Միբիլի հուժկու Անգարա գետն իր հարյուր վտակներով առաջին ելեկտրոկայանի կառուցման դեպքում չորս անգամ ավելի ուժ կտա, քան թե Դենպրոստրոյը: Կարագանդայի, — ԽՍՀՄ յերրորդ քարածխային բազայի, — հարստությունները, վորի մշակմանն անցնում ենք միայն այս տարի, հսկայական են: Կարագանդայի հետագոտված 25 կիլոմետր տարածությունը հայտարերեցին 15 միլիոն տոնն քարածուխ, մինչդեռ ամբողջ Դոնբասում միայն 69 միլիոն տոնն քարածուխ կա: Կարագանդայի քարածխային միջին ուժգնությունը մոտ 2,5 մետր է, իսկ Դոնբասինը 1-1½ մետր միայն:

ՄԵՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Ե ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Խորհրդային իշխանությունը, ղեկավարվելով կոմունիստական կուսակցության կողմից, միանգամայն ապահովում է այդ բնական հարստությունների լավագույն ոգտագործումը բանվորների ու գյուղացիների ոգտին: Մեր հասարակակարգն ազատ է կապիտալիզմի անբուժելի հիվանդություններից. ճգնաժամերից, գործազրկությունից, բուրժուազիայի շոպյությունից և լայն մասսաների չքավորությունից: «Մեր հասարակակարգը, — ասում է ընկ. Ստալինը, — չի տառապում այդ հիվանդություններով, վորովհետև իշխանությունը մեր ձեռքումն է, յբանվոր դասակարգի ձեռքում, վորովհետև մենք վարում ենք պլանային տնտեսություն, պլանաչափ կուտակում ենք հարստություններ և ճիշտ բաշխում ենք այն ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի միջև»:

Ժողովրդական տնտեսության բոլոր իշխող յարձույնները, — նրա ղեկավար բոլոր բնագավառները գտնվում են բանվորական պետության ձեռքում և ծառայում են սոցիալիզմի կառուցման նպատակներին, աշխատավոր մասսաների կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակի բարձրացմանը:

ԽՈՇՈՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ԻՇԽՈՂ ԲԱՐՁՈՒՆՔՆ Ե

Մեր տնտեսական ղլխավոր իշխող բարձույնը հանդիսանում է խոշոր արդյունաբերությունը: Նա գտնվում է պրոլետարական պետության ձեռքում, վորը կազմակերպում և ղեկավարում է այն: Լենինը քանիցս ասել է, վոր սոցիալիզմի հիմքը կարող է լինել միայն խոշոր արդյունաբերությունը և այդ պատճառով նա պետք է ամբողջ ժողովրդական տնտեսության առջևից քայլի: Թույլ արդյունաբերությամբ հողագործական յերկրից Սորհրդային Միությունը վերածվում է հուժկու ինդուստրիայի յերկրի, վորը

վերականգնում է իր ամբողջ ժողովրդական տնտեսությունը: Այդպիսով իսկ մենք ամբացնում ենք մեր տնտեսական ինքնուրույնությունը անկախությունը կապիտալիստական աշխարհից, բարձրացնում ենք մեր պաշտպանունակությունը: Մեր կուսակցությունը կիրառում է հաստատուն կերպով ինդուստրացիան ծրագրելը, մեր հիմնական իշխող բարձունքի, — արդյունաբերություն, — սոցիալիստական վերականգնման (ոսկոնստրուկցիայի) և ամբացման ծրագրերը:

Ի՞նչ է ԽՍՀՄ ինդուստրացումը և ինչո՞ւ յե նա հարկավոր մեզ:

ՏՐԱՆՍՊՈՐՏՆ ՈՒ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մեր տնտեսական իշխող յերկրորդ բարձունքն է տրանսպորտը, յերկաթուղին, ջրային ճանապարհները, ավտոմոբիլային տրանսպորտն ու ավիացիան:

Տրանսպորտը բուրժուական յերկրներում առանձին կապիտալիստների կամ կապիտալիստական կամպանիաների սեփականությունն է: Այնտեղ զարգանում են տրանսպորտի այն տեսակները միայն և կառուցվում են այն յերկաթուղիները միայն, վորոնք մեծ շահույթներ են բերում կապիտալիստներին, կամ հարկավոր են հափշտակիչ պատերազմների համար: Մենք տրանսպորտով կապում ենք Միություն բոլոր մասերը, և հաղթահարելով տարածությունները, արագացնում ենք մեր ամսան տեմպերը: Մենք տրանսպորտի ոգնությունը հաղորդակից ենք դարձնում սոցիալիստական յինարարությունը հետացմաց, սակավ բնակեցված, բայց իրենց արժեքավոր հանքերի, քարածխի, անտառների պաշարներով չափազանց հարուստ ծայրամասերը: Մենք ամբացնում ենք տրանսպորտը, ամբացնում ենք մեր յերկրի մարտունակությունը:

Չնայած նրան, վոր արդեն իսկ 1930 թվին յերկաթուղային տրանսպորտի աշխատանքը յերկու անգամ գերազանցել էր նախապատերազմյան աշխատանքին, իսկ այս տարի տրանսպորտն իր աշխատանքների ծավալով գերակատարում է հնգամյակը, տրանսպորտի զարգացումը տակավին յետ է մնում ժողովրդական տրանսպորտի աճումից: Ինդուստրացումն առաջադրում է տրանսպորտին վիթխարի պահանջներ: Կուսակցությունը ներկայումս հաստատապես վճռել է տրանսպորտը դարձնել սոցիալիստական յինարարության առաջավոր բնագավառը:

Ի՞նչ նշանակություն ունի տրանսպորտը ԽՍՀՄ տնտեսության համար:

ՀՈՂԻ ԱԶԳԱՅՆԱՅՈՒՄԸ ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆ Ե

Մեր տնտեսական յերրորդ իշխող բարձունքը հանդիսանում է սոցիալիստական դյուղատնտեսությունը՝ խորհրդային տնտեսություններն ու կոլտնտեսությունները:

Հողը մեզ մոտ ազգայնացված է, նա պետություն սեփականությունն է: Մեզանում չի կարելի շահվել հողի առուծախսով, չի կարելի ապրել հողի անաշխատ յեկամտով: Մեր գյուղատնտեսությունն մեջ առանձնապես պայծառ կերպով յերևում է տրանտեսության խորհրդային սիստեմի առավելությունը: Խորհրդային տնտեսություններն ու կոլտնտեսությունները, — սոցիալիստական յտուր գյուղատնտեսությունը, — կարող ե յին մեզ մոտ ստեղծվել միայն այն պատճառով, վոր մեզանում չկա հողի մասնավոր սեփականություն, վոր մեզանում ամեն ինչ դեկավարում է բանվոր դասակարգը:

Շնորհիվ խորհրդային տնտեսությունների ու կոլտնտեսությունների մենք ներկայումս լիովին ապահովված ենք հացով և կարող ենք հացի մի մասն արտասահման արտահանել և փոխարենը մեքենաներ ստանալ: Խորհրդային տնտեսությունների ու կոլտնտեսությունների աճումն ապահովում է արդյունաբերության զարգացումը հումույթով և սպառման յայն շուկա յետեղծում: Խորհրդային տնտեսություններում և կոլտնտեսություններում ներկայումս ստեղծվում է սոցիալիստական հուժկու կենդանաբուծությունը:

Սոցիալիզմի վճռական հաղթանակները գյուղատնտեսության մեջ հիմնովին փոխում է գյուղական արտադրություն ամբողջ բրնձով, վորը տարեցտարի մոտենում է արդյունաբերական արտադրության տիպարին: Հիմնովին փոխվում է գյուղի ու քաղաքի միջև յեղած նախկին հարաբերությունների ամբողջ բնույթը: Քաղաքի և գյուղի զարավոր ներհակություն մկում է աստիճանաբար վերանալ: Իսկ այդ նշանակում է, վոր մոտենում է այն ժամանակը, յերբ վերջնականապես կվերանան դասակարգերը և կկառուցվի սոցիալիստական յրակատար հասարակություն:

Ինչո՞ւ յե ԽՍՀՄ կիրառված հողի ազգայնացում և ինչո՞ւ յե կիրառվում գյուղատնտեսության կոլեկտիվացումը:

ՖԻՆԱՆՍՆԵՐԸ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅԵԿԱՄՈՒՅԸ

Չորրորդ տնտեսական իշխող բարձունքը հանդիսանում են մեր բանկերը, մեր ֆինանսական (դրամական) սիստեմը:

Բանկերը կապիտալիստական յերկրներում հավաքում են բնակչությունից վիթխարի միջոցներ: Այդ միջոցներն ուղտադործվում են հարստացնելու համար մի բուռ բուրժուազիային, շահագործելու համար բանվոր դասակարգին և բոլոր աշխատավորներին: Մեզ մոտ բանկերը պետություն սեփականությունն են: Նրանք վարկեր են տալիս (կարճ ու յերկար ժամկետներով) սոցիալիստական

առկան արդյունաբերութեանը, խորհանտեսութեաններին ու կտրանտեսութեաններին և այդպիսով իսկ մեր ամբողջ տնտեսութեան օտջխալիստական վերակառուցման հուժկու լծակն են հանդիսանում:

Ոնախորհական դրամարկիզներին միջոցով, փոխառութեաններին միջոցով մեր պետութեանը վարկեր և ստանում աշխատավարձերից միլիարդ ուրբլիներով, և այդ վարկերը հոտկացվում են գործարանների, ֆարրիկների, յերկաթուղիների, ելեկտրոկայանների շինարարութեանը, սոցիալիստական դյուրատնտեսութեան բարձրացմանը, յերկրի կուլտուրական կարիքներին ու պաշապանութեանը: Ինահիշութեանից հավաքվող հարկերը պետութեան կողմից օգտագործվում են սոցիալիստական շինարարութեան նույն այդ նպատակների համար, աշխատավորների շահերի համար:

1931 թվին մեր ժողովրդական յեկամուտը կազմել է 49 միլիարդ ուրբլի վիթխարի գումար, վորը 36 տոկոսով գերազանցում է անցյալ տարվա յեկամուտներին: Մենք ժողովրդական յեկամուտն ավելացնում ենք 15 անգամ ավելի արագ քան թե ցարական Ռուսաստանումն եր: Բուրուական վոչ մի յերկիր չի տեսել այդպիսի արագ զարգացում:

Մեր աճումը զգալի չափով կախված է նաև ժողովրդական յեկամտի ճիշտ բաշխումից: Նախքան հեղափոխութեանը բուրժուազիան ու կալվածատերերն իրենց պահանջների համար ծախսում էին ավելի քան 2 միլիարդ ուրբլի: Ներկայումս բոլոր միջոցները հատկացվում են շինարարութեանը և աշխատավորների դրութեան բարելավմանը:

Ինչպիսի՞ խնդիրներ ունի մեր Ֆինանսական սխտեմը:

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՄԵՆԱՇՆՈՐԸ

Մեր հինգերորդ տնտեսական իշխող բարձունքը հանդիսանում է արտաքին առևտրի մենաշնորհը (մոնոպոլիան), այսինքն ոտարյերկրյա պետութեաններին հետ սենեցած ամբողջ առևտուրը պրոլետարական պետութեան ձեռքում կենտրոնացնելը:

Դրանով պահպանվում է մեր արդյունաբերութեան զարգացումը կապիտալիստական յերկրներին մրցութեանից: Մենք ներմուծում ենք և արտահանում ենք այն, ինչ մեզ հարկավոր է, և վոչ թե այն, ինչ կամենում են մեր վզին փաթաթել կապիտալիստները:

Արտաքին առևտրի մենաշնորհի վոչնչացումը, վորին ձգտում են մեր թշնամիները, համազոր է մեր յերկիրն ինքնուրույն յերկրից կապիտալիզմին կախյալ յերկիր դարձնելուն: Այդ համազոր է բանվոր դասակարգի տնտեսական ու քաղաքական ղերքերի թուլացում, դյուրացիական մասսաների աղքատացում և կապիտալիստական տարրերի աճում:

Վո՞րն է արտաքին առևտրի մենաշնորհի նշանակութեանը:

Վերջապես՝ վերջին տարիները և՛ կոոպերացիան և՛ պետական առևտուրը դարձել են հուժկու տնտեսական իշխող բարձունք: Արտադրական կոոպերացիան կուսակցութեան ղեկավարութեամբ, նոր հիմունքներով կատարել է դյուրացիանտեսութեան՝ աշխարհում մեծագույն վերակառուցումը: Սպարտակական կոոպերացիան վերակառուցում է մեր կենցաղը: Յերկրում արտադրվող ապրանքների յերկու յերրորդը վաճառվում է սպարտակական կոոպերացիայում:

Հոյակապ խոհանոց-գործարանները, հասարակական ճաշարաններն ավելի ու ավելի լայն չափով ընդգրկում են Փարրիկիները, գործարանները, կուլանտեսութեանները, խորհանտեսութեանները, ադատադրում են բանվորուհիներին ու գեղջկուհիներին խոհանոցի ղերութեանից, ադատագրում են նրանց արտադրութեան համար, իրենց կուլտուրական մակարդակի բարձրացման համար: Պետական առևտրի ու կոոպերացիայի աշխատանքից կախված է աշխատավորների հարաճուն պահանջների բավարարումը լայն սոքրաման առարկաներով, աշխատավորներին նյութական դրութեան բարելավումը:

Ի՞նչ նշանակութեան ունի խորհրդային առևտուրը և կոոպերացիան ՌՍՀՄ սոցիալիզմի շինարարութեան համար:

ՊԼԱՆԸ ԱՌՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԼԾԱԿՆ Ե

Սոցիալիստական սխտեմի կարևորագույն առավելութեաներից մեկը հանդիսանում է պլանը, պետութեան կողմից ամբողջ ժողովրդական տնտեսութեան պլանային ղեկավարութեանը:

Ինչինն ասում եր՝ «Հաշվառումը սոցիալիզմի հիմքն է»: Մեր պլանը հենց մեր բոլոր ուժերի ու միջոցների հաշվառումն է և նրանց այնպիսի օգտագործումն է, վոր լավագույն ձևով և ամենաարագ կերպով ապահովվի սոցիալիզմի շինարարութեանը:

Մեր տնտեսական պլանները հիմնված են մեր բնական հարստութեանների, մեր տեխնիկական հնարավորութեանների հաշվառման վրա, միլիոնավոր աշխատավորների կամքը դեպի սոցիալիզմի վերջնական հաղթանակը մոբիլիզացիայի յենթարկելու հիման վրա: Մեր պլանը չի կազմվում կարիներանցում, այլ մշակվում է ու լրացվում է Ռորհրդային Միութեան միլիոնավոր բանվորների ու դյուրացիների կողմից:

«Հիմարութեան կլիներ կարծել, — ասում է ընկ. Ստալինը, — վոր արտադրական պլանը հանդում է թվերի և առաջադրանքների թվարկման: Իրոք արտադրական պլանը միլիոնավոր մարդկանց կենդանի ու պրակտիկ գործունեյութեան է: Մեր արտադրական պլանի ռեալականութեանը

(Իրադրծելի լինելը) — այլ նոր կյանք կերտող միլիոնավոր աշխատավորներն են: Մեր ծրագրի սեռականութիւնը — այդ կենդանի մարդիկ են, այդ մենք ենք ձեզ հետ միասին, մեր կամքն է ղեկի աշխատանքը, նոր ձեռք աշխատելու մեր պատրաստակամութիւնն է, պլանը կատարելու մեր վճարականութիւնն է»:

Մեր պլանը, — այդ սոցիալիստական հարձակման, մեր յերկրի սոցիալիստական վերակառուցման պլանն է: Պայքար սոցիալիզմի համար մեր ժողովրդական տնտեսութեան բոլոր բնագիտականների վերակառուցում սոցիալիստական հիմունքներով, սոցիալիզմի նյութական հիմքերի կառուցում, — ահա մեր խորհրդային պլանայնացման զլխավոր նպատակը:

Ի՞նչ է սոցիալիստական պլանը:

ՊԼԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պլանային տնտեսութիւնը հնարավորութիւն է տալիս զարգացնելու տնտեսութիւնն այնպիսի տեմպերով, վորը չափազանց մեծ չափով զերգանցում է կապիտալիստական յերկրների զարգացման տեմպերին նրանց ծաղկման շրջանում:

Պլանային տնտեսութիւնը մեզ հնարավորութիւն է տալիս խուսափելու այն կործանարար հետեանքներից, վորոնք անխուսափելի յեն արտադրութեան անարխիայի ժամանակ. պլանը մեզ ազատում է ձգնաժամերից և նրանց հետ կապված հակաշահան կորուստներից, արժեքների անլուր վոջնչացումից և մարդկային աշխատանքի հախճատելումից:

Մեր սոցիալիստական ժողովրդական տնտեսութեան պլանը հուսկու միջոց է պիտիտարներ ձեռքում ընդդեմ բուրժուազիայի մնացորդների, կուլակութեան, միասարարների ու բյուրոկրատների:

Մեր պլանը սերտորեն կապում, համաձայնեցնում է իրար հետ ժողովրդական տնտեսութեան առանձին բնագալառներ: Լափազուն Փարբիկների, խորհանտեսութիւնների ու կոլտնտեսութիւնների նվաճումներն արինակ են դառնում մյուսների համար:

Գործարանները մեզ մոտ կառուցվում են, հաշվի առնելով հումութի ու վառելանյութի աղբյուրները: Սոցիալիստական արդյունաբերութեան նոր զիզանտներ կառուցելիս մենք հաշվի յենք առնում յերկրի պաշտպանութիւնը: Գյուղատնտեսութեան մասնագիտացումը բնական պայմանների համեմատ, վոր կիրառում է խորհրդային իշխանութիւնը նույնպես հնարավոր է միայն պլանային տնտեսութեան ժամանակ:

Մեր պլանն այդ այն առավելութիւններից մեկն է, վոր ապահովում են սոցիալիզմի հաղթանակը:

Վորո՞նք են պլանային տնտեսութեան առավելութիւնները:

ՄԵՆԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ԵՆԻ ՅԵՐԿՐԻ ԵԼԵԿՏՐԻՖԻԿԱՑՄԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ՊԼԱՆԸ

Մեր տնտեսական պլանների հիմնական, ղեկավար սկզբունքը հանդիսանում է եներգիան, նրա հիմնական ողակը՝ էլեկտրիֆիկացիան: Խորթին հայտնի յեն Լենինի այն խոսքերը, թէ «կոմունիզմը խորհրդային իշխանութիւնն է՝ պլանու էլեկտրիֆիկացիա»:

Նորագույն ամբողջ տեխնիկան հիմնված է էլեկտրիֆիկացիայի վրա: Ապագայում էլեկտրականութիւնն եներգիա յե մատակարարելու տնտեսութեան բոլոր ճյուղերին՝ արդյունաբերութեանը, տրանսպորտին, դյուղատնտեսութեանը:

Ելեկտրիֆիկացիայի այն վիթխարի պլանը, վոր մշակված էր Լենինի ղեկավարութեամբ 1920 թվին և հաշվի յեր առնված 10-15 տարում կատարելու, գերակատարված է արդեն 1931 թվի սկզբներին: Այս տարի մենք գործի յենք դցում այնպիսի էլեկտրական հաստումներ, վորոնք իրենց ուժով համարյա հավասար են այն ամբողջին, ինչ մտցրել ենք մենք տասը տարվա ընթացքում: Ենորհիվ պլանայնութեան էլեկտրիֆիկացիան մեզանում զարգանում է այլ յերկրներում չտեսնված տեմպերով:

Ինչո՞ւ յե էլեկտրիֆիկացիան ղեկավար սկզբունք հանդիսանում մեր տնտեսական պլաններում:

ԵՍՆՄ-ՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊԱՏՎԻ ՈՒ ՓԱՌԻ ԲՈՐԾ Ե

Պլանայնութիւնը հնարավորութիւն է տալիս ճիշտ ողատարծելու արտադրութեան միջոցները ժողովրդական տնտեսութեան մեջ: Աշխատանքի կազմակերպման նոր ձեւերն ապահովում են մեր պլանների լավագույն կազմումն ու կատարումը: Բանվոր դասակարգը կուսակցութեան ղեկավարութեամբ ծախալի և պատմութեան մեջ չտեսնված աշխատանքի սոցիալիստական ձեւեր:

Սոցիալիստական մրցակցութիւնն ու հարվածայնութիւնը կիրառվում են մեզ մոտ ամենուրեք՝ գործարաններում, Փարբիկներում, կոլտնտեսութիւններում, կարմիր բանակում: Ենորհիվ դրան արագացվում են մեր դարգացման տեմպերը, պակասում են արտադրութեան ծախքերը: Մեզ մոտ զարգացել է նոր վերաբերմունք ղեկի աշխատանքը, կովում է նոր մարդ, վորն իր անձնական շահերը յենթարկում է կոլեկտիվի շահերին, հասարակութեան շահերին: Մեզ մոտ աշխատանքը դարձել է «պատվի գործ», փառքի գործ, խիղախութեան ու հերոսութեան գործ» (Ի. Ստալին):

Ինչո՞ւ մեզ մոտ բանվորներն այլ կերպ են վերաբերվում դեպի աշխատանքը, քան թէ կապիտալիզմի յերկրներում:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏՆԵՆԻԿԱՆ ԱՌՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒ-
ԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մենք ժառանգել ենք Հին հասարակարդից հետամնաց
տնտեսություն: Մեր խոշոր արդյունաբերությունը, խորհուրդ-
տնտեսություններն ու կոլտնտեսությունները պետք է ունենան ա-
ռաջավոր տեխնիկա:

Վերակառուցման շրջանում, սոցիալիստական մեծագույն
չինարարության շրջանում տեխնիկան վճռական դեր է խաղում:
Տեխնիկայի տիրապետման մեջ խոշորագույն նշանակություն ու-
նի գիտությունը:

Կապիտալիստական յերկրներում այժմ խոշորագույն գիտ-
նականները հաճախ աշխատանք չեն դնում իրենց համար: Մեզ
մոտ պատրաստվում են և աշխատում հազարավոր յերիտասարդ
գիտական աշխատողներ: Նոր արտադրություններ մեզ միան-
գամայն տեխնիկապես անկախ կղարձեն կապիտալիստական աշ-
խարհից:

Մինչև հեղափոխությունը մենք չենք ունեցել արդյունաբե-
րության մեջ մոտ մի գիտական-հետազոտական ինստիտուտ: Ներ-
կայումս մենք ունենք 120 այդպիսի ինստիտուտ: Նրանցից մի-
քանիսը (Ֆիզիկո-տեխնիկականը, նավթայինը) խոշորագույն
հաջողություններ են ձեռք բերել և բազմաթիվ գիտական գյու-
տեր են արել, վորոնք ավել են նրանց համաշխարհային հռչակ:

Յուրաքանչյուր համար ինչպես հարկն է այն վիթխարի թվով
նոր մեքենաները, վոր արտադրում են մեր գործարանները և վոր
գնում ենք մենք արատահամարում հարկավոր է տիրապետել ար-
տադրության տեխնիկային: Այդ ամթիվ մեծագույն նշանակու-
թյուն է ստանում աշխատանքի մեքենայացման հարցը: Ընկ.
Ստալինը այդ հարցը դրել է կուսակցության և բանվոր դասա-
կարգի տանջ, վորպես վճռական հարց:

Տեխնիկայի տիրապետումը կարևոր է արտադրության մեջ
բոլորի համար՝ սկսած բանվորից մինչև գործարանի ղեկավա-
րը: Տիրապետել տեխնիկային, այդ նշանակում է՝ մարտնչել վատե-
լանյութի, հումուրի, բանվոր ուժի ավելորդ վատման դեմ:
այդ նշանակում է՝ լիովին ոգտագործել բանվորների բոլոր պի-
տանի առաջարկներն ու գյուտերը. այդ նշանակում է՝ ավելի ևս
ամբաջել մեր յերկրի պաշտպանությունությունը, ձեռք բերել
մեր հառաջդիմություն մեջ նոր վիթխարի արագացման:

Ինչ ասել կուզի, թե ինչպիսի հսկայական նշանակություն ու-
նի կարմիր բանակի համար սպառնական տեխնիկայի յուրացումը:

Տեխնիկայի այդպիսի նշանակությունամբ տեխնիկական Հին
կապերն արդեն բաժական չեն: Հարկավոր է մեծ քանակով պատ-
րաստել մասնագետներ բանվոր դասակարգից ու կոլտնտեսիկ գյու-
ղացիներից: Չանազան տիպի դպրոցների միջոցով (Վտուզներ,
տեխնիկումներ), հեռակա ուսուցման յայն տարածված սիստե-

մի միջոցով մասսայական արտադրական-տեխնիկական պրոպագան-
դի միջոցով մենք պատրաստում ենք զանազան վորակի հարյուր
հազարավոր նոր մասնագետներ:

Ինչ նշանակություն ունեն գիտությունն ու տեխնիկան սո-
ցիալիստական չինարարության մեջ:

Ինչ է արվում մեզանում տեխնիկայի տիրապետման համար:

ԱՌՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Ե
ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ-ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ
ՄԱԿԱՐԴԱԿԸ

Սոցիալիստական չինարարության հաղթական ընթացքը, մեր
պլանների կատարումն ու գերակատարումն ընթանում են ան-
ընդհատ րանվոր դասակարգի քանակի ավելացման, քաղաքի ու
դյուղի աշխատավորների կուլտուրական մակարդակի ամձման և
նյութական գրություն բարեխղձման հետ:

ԽՍՀՄ միակ յերկիրն է աշխարհում, վորտեղ չկա գործա-
ղըրկություն: 1931 թվին վարձու աշխատողների թիվն անել է
3 միլիոն հոգով, հասնելով 17 միլիոն հոգու: Աշխատավարձը
մեղանում յերկու անգամ ավելի յե նախապատերազմյան մակար-
դակից, չհաչված սոցալահոլադրության, բանվորների կենցա-
ղի բարեխղձման Փոնդերի, կուլտուրական սպասարկման ու բնա-
կարանային չինարարության ամձումը:

Հինց միայն վերջին յերկու տարվա ընթացքում արդյունա-
բերական բանվորների ամսական միջին աշխատավարձն անել է
23, 9 տոկոսով, իսկ 1931 թվի հոկտեմբերից մենք ունենք աշխա-
տավարձի նոր բարձրացում ժողովրդական տնտեսության ղեկա-
վար բոլոր բնագավառներում: Սոցալահոլադրության բյուջեն
անել է, 1928 թվի 980 միլիոն ուսբլուց 1931 թվին հասնելով մին-
չև 2 միլիարդ 175 միլիոն ուսբլու: Բնակարանային չինարարու-
թյան Փոնդը մի տարվա մեջ ավելացել է, 682 միլիոնից հասնելով
1 միլիարդ 156 միլիոն ուսբլու:

Սորհրդային իշխանությունն ամբողջ քաղաքային տնտեսու-
թյունն ղրեց ի սղաս պրոլետարիատին: Հոկտեմբերից հետո
արդեն իսկ առաջին տարիներում տները հանձնվել էյին քաղաքա-
յին խորհուրդներին և սղու ծայրամասերից բանվորները մաս-
սայորեն փոխադրվել էյին բուրժուազիայի տները: Վերջին Հինգ
տարվա ընթացքում ԽՍՀՄ մեջ բնակարանային չինարարությունը
ներդրված է 3 և կես միլիարդ ուսբլի, վորի մի յերբորդ մասն
ընկնում է 1931 թվին: Նոր տներում տեղավորված է մեկ մի-
լիոն բանվորական ընտանիքից ավելի: Հիմնովին վերակառուց-
ված են մի շարք քաղաքներ:

Միլիոնավոր յերեխաներ ընդգրված են դպրոցով: Սանատո-
րիաներում և հանգստյան տներում 1931 թվին յեղել են մեկ մի-
լիոնից ավելի աշխատավորներ: Գոնբառում, որինակ՝ յուրա-

ճանչուր հազար բանվորից 1931 թվին հանգստյան տներում յե-
ղել է 150 հոգի և 10 հոգի սանատորիաներում և հուրորաններում:

Հարյուր հազարավոր բանվորներ ու գյուղացիներ ամեն տա-
բի գնում են բարձրագույն կրթական հիմնարկներ, բանֆակներ,
դպրոցներ ու դասընթացներ: Աճում է աշխատավորների հասա-
րակական ակտիվությունը:

ԽՍՀՄ մեջ աշխատավորների կուլտուր-կենցաղային գրու-
թյան բարելավման պայծառ ցուցանիշն է հանդիսանում բնակ-
չության ավելացումը, բնակչության ամբ մեղանում 2 և կես ան-
գամ ավելի, քան թե Յեվրոպայում: Մինչդեռ մահացությունը
նր հեղափոխությունից հետո նվազել է յերկու անգամ: Յարական
Ռուսաստանը մահացությունից Յեվրոպայում բռնում էր արտիկն
տեղը, իսկ մեր Միությունը բռնում է վերջին տեղը:

Ինչո՞վ է արտահայտվում ԽՍՀՄ աշխատավորների նյութա-
կան ու կուլտուր-կենցաղային գրությունների բարելավումը:

**ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՄԵՆՔ ԿԱՌՈՒՅՈՒՄ
ՆՆՔ ՅԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՔ ՍՈՑԻԱԼԻՉՄ**

Պրոլետարիատի դիկտատուրան ապահովում է մեզ համար սո-
ցիալիզմի կառուցման հնարավորությունը: Կիսորդանա՞նք մենք
արդյոք կառուցել սոցիալիզմ:

Բ
Հակահեղափոխական տրոցկիզմը ժխտում էր այդ հնարավոր-
ությունը: Տրոցկիսն ու նրա ղեկավարները մատնանշում էին մեր
տնտեսական հետամնացությունը, միջոցների և ուժերի պակա-
սությունը: Նրանք ասում էին, վոր գյուղացիությունը չի անց-
նի սոցիալիզմի: Այդ պատճառով, ասում էին նրանք, մենք ա-
սանց կապիտալիզմի առաջավոր յերկրների պրոլետարիան հե-
ղափոխությունների կողմից դրսի ոգնությունը չենք կարող մեր
յերկրում սոցիալիզմի կառուցել: Տրոցկիստները, կոմիելով մեր
յերկրում սոցիալիզմի կառուցման դեմ, աշխատում էին մեզ վա-
խեցնել, խուճաղ սերմանել, բանվորների ու գյուղացիների մեջ
անվստահություն, թերահավատություն տարածել:

Այլ թեքումնափորները կուլակի սոցիալիզմի մեջ «նեկրաճման»
թրեկց «թեորիաներով», մեր Միության ինդուստրացման ու կո-
լեկտիվացման տեմպերը կրճատելու վերաբերյալ իրենց պանիկ-
յորական առաջարկներով նույնպես արգելակ էին հանդիսանում
մեր յերկրում սոցիալիզմի կառուցելուն: Պայքարելով լենինյան
կուսակցության դեմ, նրանք գտնվում էին մեր թշնամիների հետ
ընդհանուր բանակում:

Կյանքը ցույց տվեց, վոր դասակարգային թշնամիների սո-
նականների այդ բոլոր մարդարեյությունները ստացի վրա զբոլան
խոսքեր էին:

Սոցիալիզմի դործը, Լենինի դործը ամուր է մեր յերկրում ա-
վելի քան յերբևե: Մեր յերկաթե կուսակցությունը ընկ. Ստալին-

նի ղեկավարությամբ, հաղթահարելով բոլոր դժվարությունները,
վանելով իր ճանապարհից բոլոր պանիկյորներին (խուճաղի մատ-
նելություններին) և թերահավատներին, բուրժուազիայի ազնաներին
ու կուլակներին, կործանիչ կրակ վարելով յերկու ճակատի վրա,
աջ սպորտունիզմի դեմ, վորպես դիտավոր վտանգի, «ճախ» խոտո-
րումների դեմ, հակահեղափոխական տրոցկիզմի տեսակետների
մնացորդների դեմ, և ամեն տեսակ հաշտվողականություն վտա-
հորեն առաջնորդում է բանվոր դասակարգին և բոլոր աշխատա-
վորներին դեպի վերջնական նպատակը: Մենք Չախջախեցինք մեր
դասակարգային թշնամիներին, — կապիտալիստական տարրերին և
գյուղատնտեսությունից մեջ: Մենք կառուցում ենք և կկառուցենք
սոցիալիզմ:

Սոցիալիզմը հաղթանակում է ԽՍՀՄ մեջ: Սոցիալիզմը կբ
հաղթանակի ամբողջ աշխարհում:

Ինչո՞ւ պայքարը լենինյան դժի համար սոցիալիզմի հաղթա-
նակների դիտավոր պայմանն է:

ԴԵՊԻ ՀԱՍԱԿԵՍԱՐԱՅԻՆ ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԿՈՄՈՒՆԻՉՄ ՈՒ ՍՈՑԻԱԼԻՉՄ

Մեր պայքարի վերջնական նպատակն է՝ կառուցել կոմունիս-
տական հասարակություն:

«Կապիտալիզմից, — դրում է Լենինը, — մարդկությունը կարող
է անմիջորեն անցնել միայն սոցիալիզմի, այսինքն՝ արտադրու-
թյան միջոցների ընդհանուր տիրապետման և արտադրանքի բաշխ-
մանն ըստ յուրաքանչյուրի աշխատանքի: Իայց մեր կուսակցու-
թյունն ավելի հեռուն է նայում. սոցիալիզմը պետք է անխուսա-
փելիորեն վերածի կոմունիզմի»:

Իսկ ինչո՞վ է կոմունիզմից տարբերվում սոցիալիզմը, վորի
նախնական շրջանը թեակոխել ենք մենք:

Սոցիալիզմը նոր հասարակության առաջին աստիճանն է. կո-
մունիզմը նրա բարձրագույն աստիճանն է:

Սոցիալիզմի ժամանակ վոչնչանում է արտադրության միջոց-
ների մասնավոր սեփականությունը, վոչնչանում են դասակարգե-
րը, ամբողջ արտադրությունը կազմակերպվում է պլանով:

Սոցիալիզմն ապահովում է յուրաքանչյուրին աշխատանքի
հավասար քանակի համար միջերջների հավասար քանակ: Այդ
պատճառով մենք պայքարում ենք աշխատավարձի մեջ հավասա-
րեցման դեմ: Սոցիալիզմի որոք այդպիսով իրագործվում է հա-
վասարեցումն ըստ աշխատանքի: Սակայն այդ հավասարությունը
դեռ լրիվ չէ: Այդ հնարավոր էլ չէ, քանի դեռ գոյություն ունի
աշխատանքի բաժանում մտավոր և ֆիզիկական աշխատանքների
միջև: Մարդիկ տակավին անհավասար են, վոճանք ավելի ուժեղ
են, ասիլի դիմացկուն, վոճանք տվելի թույլ են. վոճանք բազմ-

անդամ ընտանիք ունեն, վրանք՝ սակավանդամ ընտանիք: Այդ պատճառով հավասար աշխատանքի պայմաններում կարող ե լինել սպառման անհավասարություն: Ահա թե ինչու սոցիալիզմը դեռ «ըրիվ կոմունիզմ» է: Մակայն սոցիալիզմի որոք չկա մարդու վոչ մի շահագործում, վորովհետև չկա արտադրության միջոցների մասնավոր սեփականություն:

Կոմունիզմի լուրջագույն ե՝ «Յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ պահանջների»: Սոցիալիզմի որոք անտեսությունը չի կարող ապահովել այս լուրջագույն թաղորդումը: Ես դեռ չի կարող արտադրել միջերջներն այնպիսի քանակով, վոր յուրաքանչյուրին տրվի ըստ պահանջի: Բացի դրանից, մարդն ել դեռ լիովին մերադատարարակիված է կոմունիստական վոդով: Կոմունիզմի որոք անտեսությունը կհասնի այնպիսի բարձրություն, վոր նա կկարողանա բավարարել հասարակության յուրաքանչյուր անդամի բոլոր պահանջները: Մարդը լիովին կլիստարիտի իր բնությունը: Աշխատանքը կդառնա կենսական պահանջ, բավականություն:

Կապիտալիզմի որոք գոյություն ունի անհատականությունը դասակարգերի միջև, վորը հիմնված ե շահագործման վրա: Սոցիալիզմի որոք այդ հակասությունը չկա, սակայն տակավին մընում ե հակասությունը մտավոր ե ֆիզիկական աշխատանքի միջև, գոյություն ունի աշխատանքի բաժանում տարբեր պրոֆեսիաների ու մասնագիտությունների միջև: Այդ խմբակների դրություն մեջ տակավին կա անհավասարություն սպառման մեջ, անհավասարություն աշխատանքի բնույթի մեջ:

Կոմունիստական հասարակությունը չի ունենալու վոչ դասակարգային, վոչ խմբակային բաժանումներ: Կոմունիզմի որոք տարբերություն չի լինելու ֆիզիկական ե մտավոր աշխատանքի միջև: Յուրաքանչյուրը գրադվելու յե այն աշխատանքով, վորին նա ամենից մեծ հակում ե յղում: Եուրաքանչյուրը կգրադվի ել ֆիզիկական ել մտավոր աշխատանքով: Բոլոր մարդիկ հնարավորություն կունենան բարձրագույն կրթություն ստանալու: Ենորհիվ տեխնիկայի վիթխարի զարգացման, յուրաքանչյուրը բավական ժամանակ կունենա լայն շահով դրադվելու գիտություններով ե արվեստով:

Կոմունիզմի որոք կվերանա պետության ու նրա մարմինների կարիքը, վորովհետև չեն լինի դասակարգեր ու դասակարգային պայքար: Պետությունը լիովին կվերանա:

Ինչո՞վ ե տարբերվում կոմունիզմը սոցիալիզմից:

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՄԵՐ ԴԵՄ

Կոմունիստական հասարակությունը կարող ե կառուցվել միայն համաշխարհային հեղափոխության հետևանքով: Այստեղից ել բխում ե այն հետևությունը, վոր հարկավոր ե ամրացնել ՍՍՀՄ, վորպես համաշխարհային հեղափոխության հենարան, վորպես նրա առաջավոր պոստ:

Մեր սոցիալիստական յերկիրը փարոս ե չտուր յերկրների աշխատավորների համար՝ կապիտալիստական ճնշումից նրանց ազատագրման ճանապարհին, նա համաշխարհային պրոլետարական հեղափոխության առաջապահն ե:

Իմպերիալիստները շատ լավ են հասկանում Սոցիալիզմի Միություն միջազգային այդ հեղափոխական դերը: Նրանք տեսնում են վոր ՍՍՀՄ սոցիալիստական անտեսության արագ աճումը ե նրա ազդեցություն արագ աճումը համաշխարհային պրոլետարատի ե ճնշված ժողովուրդների վրա մտեցնում ե կապիտալիզմի կործանումն ամբողջ աշխարհում: Այդ պատճառով ամբողջ համաշխարհային բուրժուազիան միահամուռ ձգտում ե կասեցնել սոցիալիզմի աճումը ՍՍՀՄ մեջ ե մեր դեմ նոր ինտերվենցիա յե պատրաստում: Բոլոր յերկրների կապիտալիստների իղձն ե վոչ չընչացնել Սոցիալիզմի իշխանությունը մեր յերկրում ե մեր Միությունը դարձնել համաշխարհային իմպերիալիզմի դադուիթ:

Ինչո՞ւ յեն իմպերիալիստները պատերազմ պատրաստում ել ՍՍՀՄ դեմ:

ԵՍՀՄ ՀԱՄԱՇԵԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՄՐՈՑՆ Ե

Բայց մենք ներկայումս շատ ավելի յեմք պատրաստված պաշտպանելու պրոլետարական հեղափոխության նվաճումները, քան մի քանի տարի առաջ: Մենք ավարտում ենք սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը, մենք հաղթեցինք կապիտալիստական տարբերին ժողովրդական անտեսության բոլոր բնագավառներում ե մեր յերկրում պոկում ենք կապիտալիզմի վերջին արմատները, գործի յենք դնում ինդուստրիայի ու գյուղատնտեսության մեծագույն գիզանները, ուժգնորեն զարգանում ե մեր տրանսպորտը, տեխնիկորեն հաղեցվում ե կարծիք բանակը: Վերջապես՝ մենք վայելում ենք բոլոր յերկրների բանվոր դասակարգի ու բոլոր ճնշվածների ու շահագործվողների անձնվեր աջակցությունն ու համակրանքը:

Այդ մեզ հնարավորություն կտա դարձնել ՍՍՀՄ սոցիալիստական անմատչելի ամբողջ, վորի դեմ կջախջախվի կապիտալիստական աշխարհի հարձակումը:

Ահա թե ինչու «Սոցիալիզմի Միությունն անհաղթելի յե»:

ինչպես ասաց ընկ. Մուրտուզը Հոկտեմբերի 14-րդ տարեդարձի
օրը:

Ահա թե ինչու այս տարվա դարնանը խորհուրդների 6-րդ հա-
մադումարն ասաց.

«Համադումարն իրեն սարգ հաշիվ և տալիս աճող ուղղման
վտանդի մասին և դրա հետ միասին ընդունում և, վեր կապիտա-
լիստական յերկրներում խորացող ճգնաժամի պայմաններում միա-
ժամանակ յերբ տեղի յե ունենում ԽՍՀ Միության տնտեսական
ու քաղաքական կորովի ամրացումը, զինված հարձակումը ևՄՀՄ
զեմ զլխավոր վտանգ և հանդիսանում նրանց համար, ովքեր կհա-
մարձակվեն խախտելու խաղաղությունը և հարձակվելու հար-
հրդային Միության վրա:

Մենք անչեղորեն և հաստատապես խաղաղության քաղաքա-
կանություն ենք վարում: Մենք մինչև այժմ ուղտադորձել ենք և
ողտադորձում ենք բոլոր հնարավորությունները, փորպիսզի յեր-
կարացնենք շնչադադարը: Բայց յեթե իմպերիալիստները կսկսեն
պատերազմը, հարձիր դանակը, սոցիալիզմի յերկրի պահակը, — և
Խորհրդային Միության բոլոր աշխատիւորները մի մարդու պես
վտաքի կկանդենն պաշտպանելու համար ԽՍՀՄ, իսկ համաշխար-
հային պրոլետարիատն ու զաղութների ճնշված ժողովուրդները
այդ պատերազմը կվերածեն քաղաքացիական պատերազմի, կա-
պիտալիզմի տասպաղման պատերազմի, ամբողջ աշխարհում սո-
ցիալիզմի հաղթանակի համար:

Ինչո՞ւ յե Խորհրդային Միությունն անհաղթելի:



« Ազգային գրադարան



NL0206977

41.240

107

1
1